9(44)
5-21

A

Ս. ԼՕԶԻՆՍԿԻՑ

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

1789 թ.

Թարգ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1911 թ.
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Եկեղեցական տպարան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածին

9(44)
Լ-71

Ս. ԼՕԶԻՆՍԿԻՑ

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

1789 թ.

161779

Թարգ. ԱՍՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1911 թ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ելէքտրաշարժ տպարան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածին

19478

1789 ԹՈՒԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Մայիսեան պայծառ արևը լուսաւորում էր Վերսայլի լայն ծառուղին, որ տանում էր դէպի ս. Լիւդովիկոսի եկեղեցին։ Այս ծառուղիով 1789 թուի մայիսի 4-ին, առաւօտեան 10 ժամին, ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչներն ուղևորուեցին դէպի եկեղեցի, ուր սպասում էր նրանց Նանսի քաղաքի արքեպիսկոպոսի օրհնութիւնը։ Ներկայացուցիչների գնացքը կրում էր խիստ հանդիսաւոր բնաւորութիւն. առաջից գնում էին հոգևորականութեան ներկայացուցիչները, ապա ազնուականութեան ներկայացուցիչները, նրանց յետևից գնում էին, այսպէս ասած, երրորդ դասակարգի ներկայացուցիչները, այսինքն նոքա, որոնք բաղդ չէին ունեցել առաջին երկու բարձր դասակարգին պատկանելու։

Ինքնավստահ, աշխոյժ գնում էին հոգևորականութեան բոլոր 291 ներկայացուցիչները. թւում էր թէ ոչինչ չէր կարող սպառնալ մի

դասակարգի, որ իր առանձնաշնորհումները հիմնել էր աստուածային օրէնքների վրա։ Հոգևորականութեան ինչ պէտքն է ժողովրդեան դրժդոհութիւնը, գիւղացու զայրոյթը, բուրժուազիայի ազատութեան համար արձակած ճիչը. չէ՞ որ հոգևորականութիւնը «չէ յայսմ աշխարհէ» և առանց նրա անհասանելի է որ և է հասարակական կարգ...

Այնքան էլ զուարթ չէին նայում ապագային ազնուականութեան 270 ներկայացուցիչները. ուրիշ ժամանակներ էին եկել. իսկական ազնուականին հարկաւոր էր ահագին վող, իսկ այստեղ հողը տարէցտարի տալիս է աւելի ու աւելի քիչ. պարտքերն աճում են, գիւղացիք ապստամբում են և այս բոլորից զատ՝ պետութիւնը պահանջում է ազնուականներից նուէրներ. հէնց յատկապէս այդ նպատակով պետութիւնը ստեղծեց ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչներին...

Կենդրոնացած, մտահոգ, կարծես գիտակցելով ապագայ դէպքերի լրջութիւնն ու վեհութիւնը, գնում էին երրորդ դասակարգի 570 ներկայացուցիչները։ Ինչպիսի արհամարհանքով էին վերաբերւում նրանց առաջից գնացող դասակարգերի ներկայացուցիչները, իսկապէս նրանց համար ինչ է մանր իրաւաբանների և դաւառացիների այս ահագին սև զանգուածը։ Ահա միւսներից առաջ իր հասակով և առիւծի բաշով աչքի ընկնող Միրաբոն է գնում, նա, որն իբր իր անառակ կեանքի համար դուրս է արուած ազնուա-

կանութեան դասակարգից. նրանից ոչ հեռու մատնոդ քայլում է Աբրաս քաղաքի անյայտ փոստաբան Բօրեսպիկրը, որի մասին միայն գիտէին, որ նա գինի չի խմում և չի ծանօթանում կանանց հետ։ Ո՛չ, այդպիսի մարդիկը չէին կարող սարսափելի լինել հոգևորականութեան և աղնուականութեան համար։

29ℓ
270561
570 1131

I

Մայիսի 5-ին բոլոր դասակարգերի ներկայացուցիչները ժողովեցին առաջին նիստին, որ հանդիսաւորապէս բացուեց Լիւդովիկոս XVI թագաւորի ճառով։ Ինչի՞ մասին էր խօսում թագաւորը, բաւական դժուար է ասել. խիստ անբովանդակ և անգոյն էր նրա ճառը։ Թագաւորից յետոյ խօսեց Ֆինանսների աղատամիտ նախարար Նեկկերը։ Նրա ճառը ոչ ոքի չգոհացրեց, որովհետև ամենաայրող, անհրաժեշտ հարցը նա ամենևին չշօշափեց։ Նեկկերը շատ բանի մասին խօսեց. և՛ աղնուականների աղնուութեան, և՛ գիւղացիների հաւատարիմ հպատակութեան, և՛ թագաւորի սիրազեղ սրտի մասին, բայց կարծես մոռանալով ոչ մի խօսքով չյիշատակեց այն հարցը, որն այդ ժամանակ զբաղեցնում էր պատգամաւորների միտքը։ Այդ հարցը հետևեալն էր. պատգամաւորներն ինչպէս պիտի քուէարկեն—դասակարգերո՞վ թէ ամբողջովին։ Այս հարցի որոշումից, կարելի է ասել, կախուած էր ֆրանսիական պետութեան ապագայ վիճակը։ Իսկապէս եթէ քուէարկութիւնը կլինի ըստ դասակարգերի, ապա բոլոր հարցերը կվճռուեն այնպէս, ինչպէս կցանկանան երկու

արտօնեալ դասակարգերը, այսինքն ազնուական-
նութիւնն և հոգևոցականութիւնը, իսկ երրորդ
դասակարգն ունենալով միայն մի ձայն, ժողովում
կիսաղայ լոկ հանդիսատեսի դեր։ Ընդհակառակը,
եթէ քուէարկութիւնը լինի ամբողջովին, այն
ժամանակ երրորդ դասակարգը, որ ժողով էր
ուղարկել 570 ներկայացուցիչներ, այսինքն աւելի
քան հոգևորականութիւնն ու ազնուականութիւնը
միասին վերցրած, կվճռէր բոլոր գործերն ըստ
իւր, չկարօտելով երկու վերին դասակարգերի
աջակցութեան, որոնց շահերը ուղղակի հակառակ
էին այն պահանջներին, որ գրուած էին երրորդ
դասակարգի դրօշակի վրա։ Ահա թէ ինչո՞ւ էր
ծագել տաք վէճ հին Ֆրանսիայի—երկու արտօ-
նեալ դասակարգերի և երիտասարդ Ֆրանսիայի
մէջ, որ ձգտում էր ոչնչացնել հասարակութեան
դասակարգերի բաժանումը։

Մայիսի 6-ին ազնուականութիւնն ահագին
մեծամասնութեամբ քուէարկեց գործերի անկախ
վարումն, ընդունելով, որ իւրաքանչիւր դասակարգ
ինքը պիտի ստուգի իր անդամների լիազօրու-
թիւնները և վճռի բոլոր հարցերն ըստ դասա-
կարգի։ Նոյնպիսի որոշումն ընդունեցին և հո-
գևորականութեան ներկայացուցիչները, թէև աղ-
քատ քահանաներից շատերը յայտնեցին այն
միտքը թէ՝ նոքա աւելի շուտ պատկանում են
հալածուած երրորդ դասակարգին, քան արտօն-
եալներին։ Վերին երկու դասակարգերի ընդունած
որոշման շնորհիւ—անկախ ստուգել ժողովի ան-
դամների լիազօրութիւնները—երրորդ դասակար-

գի ներկայացուցիչների դրությունը դարձաւ խիստ դժուար։ Ի՞նչ անել, ինչպէս ստիպել երկու դասակարգերին զիջումներ անել և համոզել նրանց, որ բոլոր դասակարգերը պիտի վարեն գործերը միասին և կազմեն մի Ազգային ժողով, ուր քուէարկելու են բոլորը և ոչ ըստ դասակարգի։

Երկար դատեցին ու խորհեցին երրորդ դասակարգի ներկայացուցիչները, թէ ինչ անեն, մինչև որ, վերջապէս մայիս 19-ին պատգամաւոր Միրաբօն առաջարկեց հետեւեալ միջոցը. «Որովհետև, ասում էր նա, հոգևորականութեան մէջ կան այնպիսի անձնաւորութիւններ, որոնք պատրաստ են մեզ յարել, ապա հրաւիրել նրանց մեզ մօտ, և նրանց հետ դուրս գալ ազնուականութեան դէմ։ Այն ժամանակ էլ ոչ ոք չի ասիլ, թէ երրորդ դասակարգը բաղկացած է միայն խռովարարներից. չէ՞ որ մեզ հետ կլինի և հոգևորականութիւնը. տեսնենք կհամարձակուի՞ ազնուականութիւնը մենակ չհնազանդուել հոգևորականութեան և երրորդ դասակարգին, որոնք կգործեն միասին։ Մի՞թէ 24 միլլիօն մարդուց բաղկացած կուսակցութիւնը չի՞ ներկայացնում այնպիսի ոյժ, որի առաջ ազնուականութիւնը ստիպուած լինի խոնարհել իր գոռոզ գլուխը»։

Միրաբօի այս առաջարկութիւնը սաստիկ յուզեց ազնուականութեան, որ ստիպուեց դիմել թագաւորի օգնութեան. թագաւորը պարտաւոր էր բացարձակապէս յայտարարել, որ անհրաժեշտ է դասակարգային և ոչ ազգային ներկայացուցչութիւն և որ բոլոր գործերը պիտի վճռուեն ըստ

դասակարգերի և ոչ ամբողջական քուէարկութեամբ։ Բայց մինչ Թագաւորը պատրաստւում էր միջամտել հին և նոր Ֆրանսիայի վէճերին, երրորդ դասակարգի ներկայացուցիչները, պատգամաւոր Սիէյսի առաջարկութեամբ յայտնեցին, որ իրանք չեն ներկայանում միայն երրորդ դասակարգի ներկայացուցիչներ, այլ ամբողջ Ֆրանսիական ժողովրդի և Թագաւորի կողմից հրաւիրուած ժողովն է ազգային և ոչ դասակարգային ժողով։ Սա կատարեալ մարտահրաւէր էր, ինչպէս ազնուականութեան, նոյնպէս և Թագաւորին։ Յունիսի 23-ին Թագաւորը վճռեց երեք դասակարգերից հանդիսաւոր ժողով գումարել, ուր նա յայտնեց իր «ցանկութիւնը, որ 3 դասակարգերի հին բաժանումը մնար իր կատարեալ ուժի մէջ»։ Այս յայտարարութիւնից յետոյ Թագաւորը հրաման արձակեց բոլոր պատգամաւորներին ցրուել և ինքն անմիջապէս դուրս եկաւ նիստի դահլիճից։ Նրան հետևեցին ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը, իսկ երրորդ դասակարգի ներկայացուցիչներն անշարժ մնացին իրանց տեղերում վիրաւորուած և խռովայոյզ։ Մի քանի րոպէից յետոյ նիստի դահլիճը մտաւ Թագաւորի արարողապետը, որպէս զի յայտնի և յանձնի երրորդ դասակարգի նախագահ Բայլին Թագաւորի հրամանը։ Արքայական դիսպանը դեռ չէր վերջացրել իր խօսքերը, երբ Միրաբօն ցատկեց իր տեղից և գոռաց արարողապետի երեսն ի վեր. «Այո, մենք լսեցինք այն, ինչ որ ներշնչել են Թագաւորին, բայց ձեզ, որ իրաւունք չունէք

այստեղ ներկայ լինելու, հարկ չկայ մեզ յիշեցնել թագաւորի խօսքերը։ Թիւրիմացութիւններից խուսափելու համար ես գոնէ պիտի ասեմ, եթէ ձեզ յանձնարարուած է հեռացնել մեզ այստեղից, ապա դուք պիտի դիմէք զինուորական ուժի, որովհետև ժողովրդի կամքով այստեղ հրաւիրուածներս տեղի կտանք միայն սուինների ուժին»։ Արարողապետը շփոթուած հեռացաւ, իսկ Միրաբօն, վարակելով իր անձնական քաջութեամբ բոլորին, առաջարկեց կազմակերպուած ազգային ժողովին յայտարարել, որ պատգամաւորի անձնաւորութիւնն անձեռնմխելի է և դատաւորը, որ կդատի պատգամաւորին ազգային ժողովի մէջ խօսածի համար, կհամարուի դաւաճան ազգի վերաբերութեամբ և կենթարկուի մահուան պատժի։ Միրաբօի համարձակ առաջարկութիւնները դժգոհութեան հանդիպեցին մի քանի փոքրոգիների կողմից և վերջիններ փոքրոգութիւնից օգտուելով Միրաբօն սպառնալով բացականչեց. «Եթէ դուք չէք ընդունիլ իմ առաջարկութիւնը, այն ժամանակ այս գիշեր կրանտարուեն մեր ժողովի 60 անդամներ»։ Բուռն ծափահարութիւնները ծածկեցին հռետորի խօսքերը։ Ազգային ժողովը վճռապէս մտաւ յեղափոխական ուղին։

Երկու բարձր դասակարգերի ներկայացուցիչները համոզուած երրորդ դասակարգի ուժի մէջ և անհնարին համարելով նրա հետ բացարձակապէս կռուելը, կամաց կամաց, անտես անելով կարգապահութիւնը, սկսեցին ներկայ լինել ազգային ժողովի նիստին։ Լռելեայն ներկայ են լի-

նում նրանք այն համարձակ որոշումներին, որոնք ընդունում են երրորդ դասակարգի կողմից, որն այժմ իրան անուանում է ամբողջ ազգի ներկայացուցիչ և նրանց սրտերում հաստատում է ոճրագործ ծրագիր—բռնի տիրանալ այն բանին, ինչ որ չյաջողեց իրանց թագաւորի հրամանների միջոցաւ...

II

Յուլիսի առաջին թուերից սկսեցին ամեն կողմից Պարիզ և Վերսայլ հաւաքուել զօրքեր, օդի մէջ զգացւում էր փոթորկի մօտենալը և բոլորը միաձայն ասում էին, որ կառավարութիւնը միաժամանակ կամենում է յարձակուել և՛ ազգային ժողովի և՛ Պարիզի վրա, ուր դէպի ժողովի գործունէութիւնը համակրանքը խիստ մեծ էր։ Միևնոյն ժամանակ դանազան կառավարչական պրօվոկատորներն աշխատում էին անկարգութիւն առաջացնել Պարիզում։ Նրանց նպատակը հետևեալն էր —ազգային ժողովը, որ նիստեր էր գումարում Վերսայլում, կարող էր զօրքի հետ միասին դուրս գալ խռովարարների դէմ և այն ժամանակ նա կկորցնէր իր ժողովրդականութիւնը պարիզցիների աչքում. կամ նա կարող էր չմիջամտել պարիզեան անկարգութիւններին և այն ժամանակ թագաւորը կյայտարարէր, որ ազգային ժողովը անկարող է ապահովել հասարակական անդորրութիւնը, ուստի և պիտի արձակուի։ Բայց ազգային ժողովը կարողացաւ ցրել պրօվոկատոր

կառավարութեան միտումները և հրատարակեց կոչ թէ զինուորներին, ապացուցանելով նրանց, որ չպէտք է գնտակ արձակել դէպի ամբոխը, նոյնպէս և ժողովրդին յիշեցնելով, որ անհրաժեշտ է այս լուրջ բոպէին պահպանել կատարեալ հանդըստութիւն։

Սակայն կառավարութեան այս անյաջողութիւնը չկանգնեցրեց նրա պրովոկատորական գործունէութիւնը և յուլիսի 12-ին Պարիզն իմացաւ, որ աղատամիտ նախարար Նեկկերը հրաժարեցրած է և նրա տեղը նշանակուել է ինչ որ յետադէմ անձն։ Անմիջապէս Պարիզի փողոցները լցուեցին ժողովրդական բազմութեամբ, տեղ-տեղ հակակառավարչական ցոյցեր եղան և զինուորներն անխըղճօրէն ցրեցին ցուցարարներին, որոնք տանում էին հրաժարեցրած ֆինանսների նախարար Նեկկերի սգազգեաց կիսարձանը։ Երկրորդ օրն ազգային ժողովին ներկայացաւ Պարիզի կողմից պատգամաւորութիւն, որ պահանջում էր հիմնել քաղաքային միլիցիա, որը «չի ջարդիլ խաղաղ քաղաքացիներին, այլ կպաշտպանի նրանց»։

Պատգամաւորութեան պահանջը պաշտպանում է և ազգային ժողովի անդամ Շապելիէն։ «Փորձը մեզ ցոյց տուեց, ասաց նա, որ իսկապէս ժողովուրդը կարող է պաշտպանել ժողովրդին»։

Այս խօսքերը Պարիզում ընդունուեցին խիստ համակրանքով և հէնց նոյն օրը քաղաքային վարչութեան մէջ հիմնուեց ժամանակաւոր յանձնաժողով, որի պարտաւորութիւնն էր քաղաքացիներին պաշտպանել յետադէմ կուսակցութեան

հնազանդ զինուորներից և ոստիկանութիւնից։

Յաջորդ օրը, յուլիսի 14-ի առաւօտեան, պարիզցիք վախեցան այն տեսարանից, որ ունէր Ֆրանսիայի մայրաքաղաքը։ Գլխաւոր հրապարակներում, մանաւանդ Սենտ-Անտուանեան արուարձանում կանգնեցրած էր հեծելազօրքը, որ նոյն իսկ մի տեղ չէր կանգնում, այլ ինչ որ ռազմական վարժութիւններ էր անում, գնալով մի տեղից միւսը։ Ի՞նչ էին նշանակում հեծելազօրքի այս փորձերը, հեշտ էր հասկանալ, ի նկատի ունենալով մի կողմից աղատամիտ Նեկկերի հրաժարականը, իսկ միւս կողմից պարիզեան քաղաքային վարչութեան մէջ կազմուած ժամանակաւոր յանձնաժողովը։ Ժողովուրդը հաւատացած էր, որ կառավարութիւնը, որի թիկունքի յետևը կանգնած էին արտօնեալ դասակարգերը, Պարիզում կոտորած է պատրաստում և սաղմի մէջ կամենում է խեղդել յեղափոխական շարժումը։

Ժողովրդեան բազմութիւնն անհանգստօրէն խնդրում է «Palais Royal»-ը շրջապատող այգում, որ այնտեղ իմանայ թէ ի՞նչ պիտի անի և լսի սիրած հռետորներին։ Այնտեղ էին դեռ երիտասարդ փաստաբան Կամիլլ Դեմուլէնը, գեղեցիկ պատանին, որ ժողովրդին զէնքի էր հրաւիրում. Թիկնաւէտ գարեջրագործ Սանտերը, որի հայեացքի առաջ խոնարհւում էր ամբողջ Սենտ-Անտուանեան արուարձանը. քաջ Հօլլէնը, որ թ.նամու հետ ուժով չափուելու կրքից վառուած էր և շատ ուրիշները, որոնք յետոյ մեծ յեղափոխութեան հերոսները դարձան։ Բոլոր հռետորները միևնոյն

բանն էին պնդում թէ՝ անհրաժեշտ է տալ ամենա-վրճռական ճակատամարտ կառավարական ուժի դէմ։ Եւ մի միտք յանկարծ բոլորի աչքը բացեց. Սենտ-Անտուանեան արուարձանի մուտքի առաջ կանգնած էր ահագին, մռայլ քաղաքական բանտ Բաստիլիան. նա հին բեժիմի մարմնացումն էր և Պարիզի ներսում փայլելով, կարծես ասում էր ամենքին. յիշեցէք թէ ինչ է սպասում նրանց, որոնք չեն կամենում հնազանդուել իշխանութիւն-ներին. և բոլորը միաբերան գոռացին—գնանք Բաստիլիայի վրա։ Մի ակնթարթում զէնքեր գտնուեցին և ամբոխը շարժուեց դէպի մռայլ բանտը։ Թնդանօթային սոսկալի համազարկով դիմաւորեց բերդապահ Դիլօնիէն ամբոխին և թւում էր թէ ժողովուրդը չպիտի վերցնի Բաստիլիան։ Ամբողջ չորս ժամ ժողովուրդը գնտակոծում էր բանտը, բայց բոլորն իզուր. յանկարծ երևաց սպիտակ դրօշակը, յայտարարուեց ամբոցի —բանտի անձնատուր լինելը։ Ժողովուրդը հրճուում էր, արձակեց Բաստիլիայում բոլոր նըստածներին, իսկ բերդապահին տեղնուտեղը սպանեց։

Վերսայլեան կառավարութիւնը շփոթուեց և թագաւորը լսելով իր մերձաւորներից, որ Պարիզում «խռովութիւն և յեղափոխութիւն է», ներկայացաւ ազգային ժողովին և յայտարարեց, որ «իր անձը վստահանում է ժողովրդի ներկայացուցիչներին»։ Վերջինս յաղթանակը կատարեալ էր և Պարիզը կազմակերպեց ազգային գվարդիա (քաղաքային զինուորութիւն), ընտրելով նրան

հրամանատար ազգային ժողովի ժողովրդական պատգամաւոր Լաֆայետին, և նոր քաղաքային վարչութիւն, նրան գլուխ կանգնեցնելով ազգային ժողովի ներկայացուցիչ Բայլին։ Մինչդեռ ժամանակ կառավարութիւնը մի շարք զիջումներ արեց. Նեկկեր նախարարը կրկին հրաւիրուեց իր պաշտօնին, զօրքը դուրս տարուեց Պարիզից և Վերսայլից և բուրբոնեան նախկին դրօշակը փոխարինուեց նոր եռագոյն դրօշակով։

III

Բաստիլիայի առումն ահագին նշանակութիւն ունեցաւ. Բաստիլիայի հետ ընկաւ հին կարգը և այդ ամենքն էին զգում։ Շատ արքայազներ և առհասարակ թագաւորի մերձաւորներ սկսեցին թողնել Ֆրանսիան, օգնութիւն փընտռելով այն պետութիւնների մէջ, ուր ժողովուրդը խաւարի և տգիտութեան շնորհիւ, որի մէջ նրանց պահում էր կառավարութիւնը, քնած էր խոր-խոր քնով. միւս կողմից երիտասարդ Ֆրանսիան սկսեց ամենուրեք կազմակերպուել Պարիզի օրինակով և ամենուրեք վարչութիւնը վերջնականապէս գլուխը կորցրեց. նա չգիտէր գաւառներում պէտք է պահպանել հին կարգը, թէ Բաստիլիայի առումից յետոյ նրան ոչինչ չի մնում անել։ Կառավարական գործակալների այս շուարումը, մայրաքաղաքում ամբողջ կառավարութեան աչքի առաջ ժողովրդի ամբոխին տիրանալու փաստի հետ միասին գիւղական անգրագէտ մասսայի մէջ մտցրեց այնպիսի

քաոս, որ գիւղացիք իրանք սկսեցին քանդել իրանց փոքրիկ Բաստիլիաները, այսինքն այն կալուածատէրերի ագարակները, տները, ապարանքները, որոնք դարերի ընթացքում նրանց ատելի էին. միևնոյն ժամանակ աւարի տուին և վանքերն ու առհասարակ հոգևորականութեան ստացուածքը, որովհետև նա էլ հին երանելի ժամանակներում աղնուականութեան հետ հաւասար հալածում և ճնշում էր ժողովրդական մասսային։ Ֆրանսիայում սկսուեց կատարեալ անիշխանութիւն, և ամեն գիշեր Ֆրանսիայի վրա բարձրանում էր հրդեհների ցոլքը, այրում էին գիւղացիներին ատելի երկու արտօնեալ դասակարգերի ստացուածքը։

Այս ընդհանուր խառնաշփոթութեան մէջ ազգային ժողովն իրան չկորցրեց. նա զգում էր, որ անհրաժեշտ է պաշտպանել քաղաքացիների ստացուածքը, այլապէս Ֆրանսիայում հին բժիմի կամայականութիւնից և հալածանքից ազատուելու գործը վտանգի մէջ էր. բայց միւս կողմից նա գիտակցում էր, որ քաղաքացիներին պաշտպանելը պիտի թողնուի ոչ արքայական զօրքին և ոչ կառավարութեան գործակալներին, այլ ժողովրդական այն ուժին, որ առաջին բոպէում գուցէ կշփոթուի, բայց որն, այնու ամենայնիւ, կգնահատի այն, ինչ որ կխոստանայ ազգային ժողովը։ «Գիւղացիական շարժումը ճնշելը, ասում էր ազգային ժողովում Միրաբօն, չպէտք է թողնուի Լիւդովիկոսի նախարարներին, որոնք կարգը վերականգնելու պատրուակով հեշտութեամբ կա-

բող են խեղդել և յեղափոխութիւնը։ Անհրաժեշտ է, որ երիտասարդ Ֆրանսիան ինքն իր վրա վերցնի գիւղացիութեան գրգիռը խաղաղեցնելու գործը։ Այս պատճառով անհրաժեշտ է, որ Ֆրանսիայի բոլոր համայնքներն իրաւունք ունենան ամեն տեղ կազմակերպել ազգային գվարդիա, քաղաքային միլիցիա։ Մենք հաւատում ենք ժողովրդին, ուստի և պահանջում ենք զինել նրան ինչպէս հասարակական կարգը վերականգնելու, նոյնպէս և երիտասարդ Ֆրանսիան փրկելու համար»։

Միրաբոի այս առաջարկութիւնն ազգային ժողովը ընդունեց հիացմունքով, հեռացրեց ընդհանուր անիշխանութեան կարելիութիւնը. քաղաքային հիմնարկութիւնները զինեցին ազգաբնակութեան այն տարերը, որոնց շահը պահանջում էր միաժամանակ թէ վտանգը կանխեցնել և թէ ամրապնդել այն սեպհականները, որի համար ոտքի էր կանգնել երրորդ դասակարգը։ Այն համայնքների մէջ, ուր քաղաքային հաստատութիւնները գտնւում էին յետադէմների կամ հին արտօնութիւնների կողմնակիցների ձեռքում, ժողովուրդը պահանջեց անմիջապէս վերակազմել իրանց հաստատութիւններն և հրաւիրել քաղաքային ընտրողներին։

Որքան էլ Միրաբոի առաջարկած միջոցը յաջող լինէր, այնու ամենայնիւ նա այն ժամանակուայ Ֆրանսիայի չարիքներից բուժուելու իսկական միջոցը չէր. ամենքի համար պարզ էր, որ համարեա ամեն տեղ ոտքի կանգնած գիւղա-

ԱՄՍՕՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
A 16772

ցիները պահանջում էին աւելի շատ բան, քան «հասարակական կարգի վերականգնումը» մինչև անգամ երրորդ դասակարգի ձեռքով։ Գիւղացիական ապստամբութիւնն առաջացել էր այն սոսկալի դրութիւնից, որի մէջ գտնւում էր այն ժամանակ ֆրասիացի գիւղացին և պէտք էր օգնել գիւղացիներին ինկախ քաղաքացիներին դիմելուց։ Այս հիման վրա ազգային ժողովը առաջարկեց իր անդամներից մէկին–ոմն Սոլոմոնին–զեկուցումն ներկայացնել գիւղացիների դրութեան մասին։ Մութ գոյներով էր նկարագրել զեկուցանողը գիւղական կեանքը և նրա խօսքերը ժողովի վրա այն պատճառով տպաւորութիւնը գործեցին, որ բոլորը գիտէին թէ ինչպէս գիւղացիութիւնը գրգռուած է իրեն ճնշող հոգևորականութեան և ազնուականութեան դէմ։ Ամենքն զգում էին, որ գիւղացիների բացարձակ ապստամբութիւնն ու կատաղութիւնը կանգնեցնել անկարելի էր և այդ դրութիւնից դուրս գալու ամենալաւ ելքն էր ընդառաջ գնալ գիւղացիութեան ցանկութիւններին։ Օգոստոսի 4-ի նիստում հոգևորականութեան և ազնուականութեան ներկայացուցիչները, երրորդ դասակարգի միախորհուրդ հաւանութեամբ հրաժարուեցին իրանց հին արտօնութիւններից և մի գիշերում Ֆրանսիայում ոչնչացուեց ճորտութիւնը կամ ինչպէս յաճախ գործ է ածւում աւատականութիւնը (ֆէօդալիզմ)։ գիւղացին դարձաւ ազատ մարդ, ազնուականները չէին կարող այլևս նրանց վրա նայել իբրև ճորտի կամ առարկայի վրա։ հոգևորականութիւնը զրկուեց բերքի 1/10 ստա-

նալուց, երկու արտօնեալ դասակարգերն ըստ ամենայնի հաւասարուեցին ազգաբնակութեան միւս մասի հետ և օգոստոսի 4-ը դարձաւ սկիզբ Ֆրանսիական ժողովրդի աւելի արդար և բաղդաւոր կեանքի։

Բայց չպէտք է մոռանալ, որ այս կեանքը բնական հետևանք էր գիւղական այն յուզումներին, որ յուլիսի 14-ին Բաստիլիայի առումից յետոյ ճարակիլ էր ամբողջ Ֆրանսիան։ Ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը հին արտօնութիւնները զոհելով օգոստոսի 4-ին, ազնիւ քայլ արեցին նրա համար, որ տեսան իրանց անել դրութիւնն և հասկացան, որ միայն այս զոհաբերութեամբ կարելի է փրկել թէ իրանց ժողովրդականութիւնը և թէ ստացուածքի այն մասը, որ դեռ չի ոչնչացրած ապստամբ գիւղացիների սրով ու հրով։ Եւ օգոստոսի 4-ին հէնց որ գիւղացիք հանգստացան, ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը, որ այնպէս «անշահասիրութիւն» էին ցոյց տալիս «ընշանաւոր» երեկոյին, սկսեցին յետ գնալ և պահանջում էին, որ գիւղացիները վճարեն նախկին արտօնեալ դասակարգերին բաւական խոշոր գումար «շնորհած» ազատութեան համար։ Բացի այդ, ազնուականութեան կողմից փորձեր եղան Ֆրանսիական պատմութիւնից «պոկել» այն «թերթը», որի վրա փայլում էր «օգոստոսի 4» թուականը, բայց յեղափոխական երիտասարդ Ֆրանսիան հին Ֆրանսիայից միանգամ խլելով այդպիսի բարեփոխութիւն, չէր ցանկանում յետ գնալ և գիւղացիական

ազատությունը դարձաւ ազգային ժողովի հաստատուն նուաճումն։ Այս նուաճումից յետոյ Ֆրանսիայում տիրում է լուսիւն և ազգային ժողովը ձեռնարկում է՝ իբրև սահմանադիր ժողով՝ նոր օրէնքների մշակման, որի վրա այդ օրից պիտի կառուցուէր ազատ Ֆրանսիան։

IV

Այն ժամանակուայ Ֆրանսիական պետութեան անկիւնաքարերն էին ազնուականութեան և հոգևորականութեան արտօնութիւններն և այս արտօնութիւններից բղխած երրորդ դասակարգի, այսինքն համարեա ամբողջ Ֆրանսիական ժողովրդի տառապանքն ու ճնշումները։ Ժողովրդին հարստահարելն ազնուականութիւնն ու հոգևորականութիւնն անուանում էին պատմական իրաւունք և այս իրաւունքի անունով կատարում էին ամեն տեսակ անօրինութիւն և անարդարութիւն, ամեն տեսակ տառապանք և ճնշում։ Նա, ով արտօնեալ դասակարգերի անլուր բռնութիւնների դէմ ձայն էր բարձրացնում, խեղդւում էր յանուն պատմական իրաւունքի և «C'était jadis ainsi» (այսպէս էր ի հնուց) ֆորմուլան անխտիր իշխում էր հալածանքի և կամայականութեան, խաւարի և տգիտութեան վրա։ Պէտք էր պոկել իրաւական դիմակը —պատմական իրաւունքը—կամայական բեժիմի երեսից, պէտք էր խորտակել անարդար և կոպիտ կարգերի պատուանդանները և պատմական

իրաւանց տեղ կանգնել ուրիշ իրաւունք, աւելի հին իրաւունք—բնական իրաւունք։ Երիտասարդ Ֆրանսիան կռուում էր հին Ֆրանսիայի դէմ հին Ֆրանսիայի զէնքերով։ «Դուք, որ պաշտպանում էք ձեր անարդար իրաւունքը միայն նրա համար, որ նա հին է, դուք պիտի խոնարհուէք բնական օրէնքի առաջ, որովհետև նա յաւիտենական է, որովհետև նա գոյութիւն ունի աշխարհի ստեղծագործութեան րոպէից»։ Այսպէս ծնունդ առաւ Ֆրանսիայի նոր պետական կազմի, նոր սահմանադրութեան գաղափարն, որ պարունակում է իր մէջ մարդու և քաղաքացու «բնական» իրաւանց շարքը։ 1789 թուի մեծ բարենորոգիչները սկսեցին իրանց գործունէութիւնը մարդու և քաղաքացու իրաւունքների հանդիսաւոր յայտարարութիւնը (դեկլարացիան) կազմելով, որը ֆրանսիական առաջին սահմանադրութեան մի տեսակ նախաբանն եղաւ։

Իրաւունքների այս դեկլարացիան բաղկացած է 17 յօդուածներից և մինչև այժմ էլ առաջաւոր դասի պահանջն է արտայայտում։ Այդ պատճառով, աւելորդ չենք համարում առաջ բերել այս պատմական փաստաթուղթը, որն անգիր պիտի գիտենայ ամեն մի իսկական քաղաքացի, որի համար թանկ են իր մարդկային արժանապատուութիւնն ու ազատութիւնը։ Ահա թէ ինչ է ասում մարդու և քաղաքացու այս նշանաւոր դեկլարացիան։

Յօդ. 1. Մարդիկ ծնւում և մնում են ազատ և հաւասար իրաւունքներով։ Նրանց մէջ հասա-

բակական դրութեան իմաստով տարբերութիւնը կարող է հիմք ունենալ այն դէպքում, երբ դա օգտակար է հասարակական բարեկեցութեան համար։

Յօդ. 2. Քաղաքական ամէն տեսակ միութիւնների նպատակն այն է, որ պահպանի և երբէք չկորցնի իրաւունց բնական նշանակութիւնը։ Այդ իրաւունքներն են. ազատութիւն, սեպհականութիւն, ապահովութիւն և դիմադրութիւն հալածանքի։

Յօդ. 3. Ազգը սկզբնական աղբիւրն է ամէն տեսակ վերին իշխանութեան։ Մարդկանց ոչ մի խումբ, ոչ մի մասնաւոր մարդ չի կարող իշխանութիւն ունենալ, եթէ սա չի բղխում ազգից։

Յօդ. 4. Ազատութիւնը կայանում է նրանում, որ ամէն մինը կարող է անել այն, ինչ որ չի վնասում միւսին։ Իւրաքանչիւրի բնական իրաւունքից օգտուիլը կարող է ճնշուել այն չափով, ինչ չափով այդպիսի օգտուիլը չի խանգարում ուրիշին օգտուել իւր բնական իրաւունքներից։ Միայն օրէնքով են սահմանւում այդ սահմանափակումները։

Յօդ. 5. Օրէնքը կարող է արգելել միայն այն գործողութիւնները, որոնք հասարակութեան վնաս են բերում։ Այն բոլորը, ինչ որ օրէնքով չի արգելուած, չպիտի արգելքի հանդիպի իրագործման ժամանակ։ Ոչ ոքի չպիտի հարկադրել անելու այն, ինչ որ չի հրամայւում օրէնքով։

Յօդ. 6. Օրէնքը ընդհանուրի կամքի արտայայտութիւնն է։ Բոլոր քաղաքացիք իրաւունք

ունեն անձնապէս, կամ իրանց ներկայացուցիչ-
ների միջոցաւ մասնակցել օրէնքներ կազմելու
մէջ։ Օրէնքը միատեսակ պիտի լինի բոլորի
համար, լինի նա պաշտպանող թէ պատժող
օրէնք։ Բոլոր քաղաքացիք հաւասար լինելով
օրէնքի առաջ, միատեսակ կարող են ստանալ
կոչումն, տեղ և հասարակական պաշտօն, իրանց
ընդունակութիւնների համեմատ և կարող են
դերադասուել միայն իրանց առաքինութիւնների
և տաղանդի շնորհիւ։

Յօդ. 7. Ոչ ոք չպիտի ձերբակալուի, մե-
դադրուի կամ բանտարկուի այն դէպքերում, որ
որոշուած չեն օրէնքով և այն ձևով, որ չի հրա-
մայուած օրէնքով։ Նա, ով ձգտում է, տալիս է,
կատարում է կամ ստիպում է կատարել կամա-
յականութեան վրա հիմնուած կարգադրութիւն-
ներ, ենթարկուում է պատժի։ Բայց ամեն մի
քաղաքացի, որ օրէնքի ուժով կանչուած կամ
ձերբակալուած է, պէտք է անմիջապէս հնազան-
դուի. ընդդիմութիւն ցոյց տալով նա դառնում է
յանցաւոր։

Յօդ. 8. Օրէնքը պիտի պատիժներ սահմանի
միայն խիստ և ակնյայտնի անհրաժեշտ։ Ոչ ոք
չպիտի պատժի ենթարկուի առանց այն օրէնքի
ուժի, որ հաստատուած և յայտարարուած է
մինչև յանցագործութիւնը և գործադրուում է ըն-
դունուած կարգով։

Յօդ. 9. Որովհետև ամեն մի մարդ անմեղ է
ենթադրուում մինչև այն րոպէն, երբ դատարանը
նրան մեղաւոր է յայտարարում, ուստի անհրա-

ժեշտաբար նրա բանտարկութեան դէպքում օրէնքը պիտի հոգայ կատարելապէս խստութիւնները վերացնելու, որ անհրաժեշտութիւնից չի առաջանում, ապահովել նրա անձը դատարանի առաջ։

Յօդ. 10. Ոչ ոք չպիտի իր համոզմունքների համար ճնշուի, նոյն իսկ կրօնական, միայն եթէ այդ երևոյթը չի խախտում հասարակական կարգը, որ օրէնքով սահմանուած է։

Յօդ. 11. Մտքերի և կարծիքների ազատ փոխանակութիւնը կազմում է մարդու ամենաթանկագին իրաւունքներից մինը և ամեն մի քաղաքացի կարող է ազատ խօսել, գրել և տպագրել, միայն ի չարը գործ դնելու ժամանակ օրէնքով սահմանուած պատասխանատուութեան ենթարկուելու պայմանով։

Յօդ. 12. Մարդու և քաղաքացու իրաւունքները պաշտպանելու համար անհրաժեշտ է զինեալ ուժ։ Սակայն նա գոյութիւն ունի միայն ընդհանուր բարօրութեան համար, և ոչ այն մարդկանց մասնաւոր օգտի համար, որոնց յանձնուում է զինուորական ուժի ղեկավարութիւնը։

Յօդ. 13. Զինեալ ուժ պահելու և պետութիւնը կառավարելու ծախսերի համար անխուսափելի է ընդհանուր տուրքը։ Սա պիտի հաւասարապէս բաժանուած լինի բոլոր քաղաքացիների մէջ համեմատ իրանց կարողութեան։

Յօդ. 14. Բոլոր քաղաքացիներն իրաւունք ունեն անձնապէս կամ իրանց ներկայացուցիչների միջոցով որոշել պետական հարկի անհրաժեշտու-

թիւնը, ազատորէն համաձայնել նրանց մասին, հեռանել նրանց ծախսերին և որոշել նրանց չափը, բաշխման եղանակը, ստանալու միջոցները և նրանց գործունէութեան ժամանակամիջոցը։

Յօդ. 15. Հասարակութիւնն իրաւունք ունի հաշիւ պահանջելու վարչութեան իւրաքանչիւր ներկայացուցչից։

Յօդ. 16. Այն հասարակութիւնները, ուր իրաւունքները չեն ապահովուած և չի սահմանուած իշխանութիւնների բաժանումն, սահմանադրական չեն։

Յօդ. 17. Որովհետև սեպհականութիւնն անքակտելի և սրբազան իրաւունք է, ուստի ոչ ոքի չի կարելի զրկել, բացի այն դէպքերից, երբ այդ պահանջում է ակնյայտնի հասարակական կարիքը, սահմանուած օրինական կարգով և այն՝ միայն արդար, նախապէս վարձատրութեան պայմանով։

V

Ազգային Ժողովը նոր Ֆրանսիայի հիմք կազմող ընդհանուր սկզբունքները սահմանելուց յետոյ ձեռք առաւ Ժողովի դէպի թագաւորն ունեցած յարաբերութեան հարցի քննութիւնը։ Այս հարցի մասին կարծիքները տարբեր էին. մի քանիսն ասում էին՝ քանի որ ամեն մի իշխանութիւն ազգից է բղխում, ապա և օրէնքները պիտի երկրին թելադրուեն ամբողջ ազգի ներկայացուցիչների կողմից և չպիտի ենթարկուեն փոփոխութիւնների նոյն իսկ այն դէպքում, եթէ թագաւորը

չի հաւանում այդ օրէնքները։ Ուրիշ խօսքով, այս տեսութիւնը պաշտպանողների կարծիքով, ժողովրդի կամքը պիտի բարձր կանգնի արքայական կամքից և պարլամենտին, իբրև ժողովրդական ներկայացուցիչներից կազմած մի հիմնարկութեան, պիտի պատկանի գերագոյն իշխանութիւնը։ Ուրիշներն ասում էին բոլորովին հակառակը և կամենում էին թագաւորին թողնել արգելք դնելու իրաւունքը կամ ինչպէս ասում են «վետո» դնել պարլամենտի այն որոշումների վրա, որոնք այս կամ այն պատճառով չեն դուր գալ թագաւորին։ Թագաւորը, նրանց կարծիքով պիտի երկրի իսկական կառավարիչը լինի և երբ նա ժողովրդական ներկայացուցիչների որևէ որոշումը չի հաւանել, այդ որոշումը օրինական ուժ չի կարող ունենալ։ Այս երկու իրար ճնշող կարծիքների մէջ կանգնած էր և երրորդ կարծիքը, որն սկզբունքով չհերքելով ժողովրդական ներկայացուցչական հիմնարկութեան գերագոյն իրաւունքը, ցանկանում էր թագաւորին տալ իրաւունք առժամանակ կանգնեցնելու պարլամենտի որոշումները։ Երբ թագաւորը հնարաւոր չի գտնում պարլամենտի այս կամ այն որոշումն հաւանել, նա իրաւունք ունի չվաւերացնել, բայց այն պայմանով, որ երբ ուրիշ ներկայացուցչական կազմով երկրորդ անգամ նոյն հարցը ընդունուի, թագաւորն ի վերջոյ պարտաւոր է զիջել և համաձայնել այն օրէնքին, որն որևէ պատճառով իր սրտին մօտիկ չէ։ Ուրիշ խօսքով, թագաւորը կարող է միայն մի որոշ ժամանակ յետաձգել պարլամենտի

որոշումները, բայց երբ վերջինս, ունենալով ամբողջ ժողովրդի կամքը, յամառում է իր որոշումների վրա, թագաւորը պարտաւոր է զիջել։

Աղգային ժողովը երկար քննեց այս երեք կարծիքները և այն ժամանակ, երբ այստեղ կրքոտ ու տաք վիճում էին այս առթիւ, Պարիզն իր հերթին յուզւում էր և պահանջում, որ բոլոր որոշումները ելնեն միայն ժողովրդեան ներկայացուցիչներից և որ թագաւորն իրաւունք չունենայ նոյն իսկ ժամանակաւորապէս կանգնեցնել ժողովրդական ներկայացուցիչների ընդունած որոշումները։

Պատգամաւորի ամեն մի կտրուկ խօսքը, որ ասւում էր պարլամենտի որոշումները պահելու համար թագաւորին տրուելիք իրաւունքի դէմ, իսկոյն յայտնի էր լինում Պարիզում և ժողովուրդն ուրախութեամբ ընդունում էր այդպիսի խօսքերը։ Պարիզում ամենքը գիտէին, որ պատգամաւոր Սիէյսը ժողովում յայտարարել է, որ թագաւորին ժողովի որոշումների վրա արգելք դնելու իրաւունք տալը հաւասարազօր է ամբողջ աղգը Բաստիլիայում փակելուն։ Իսկ միւս պատգամաւոր Պետիօնն ասել էր, որ եթէ պարլամենտի որոշումներն առանց վաւերացնելու գործադրել չի կարելի, այն ժամանակ այդ վաւերացումը թող ամբողջ ժողովրդից լինի և ոչ կախուած լինի մի անձնաւորութիւնից։ Ուրիշ խօսքով Պետիօնն առաջարկում էր այն, ինչ որ այժմ կոչւում է ռեֆերենդում, այսինքն ժողովրդական ուղիղ ձայնատուութիւն։

Պետիոնի խօսքերի դէմ խիստ բողոքում է Բօբեսպիերը. նրա աչքում ազգային ժողովը ժողովրդի գերագոյն կամքն է և պարլամենտի որոշումներն երբէք չպիտի կարօտին որ և է մէկի հաւանութեան, միևնոյն է այդ կլինի թագաւորի թէ ամբողջ ժողովրդի կողմից։ Երկուսից մէկը, ասում է նա, կամ ժողովրդական ներկայացուցչութիւնն է գերագոյն դատաւոր և նրա բոլոր որոշումներն ունեն անմիջական օրինական ուժ, կամ պարլամենտն ամբողջ ազգ չի ներկայացնում, այն ժամանակ նա իրաւունք չունի որ և է որոշումն ընդունելու։

Երկար վիճաբանութիւններից յետոյ ազգային ժողովն ընդունեց միջին որոշումն. թագաւորին վերապահուեց իրաւունք ազգային ժողովի որոշումները մի որոշ ժամանակ կանգնեցնել։ Պարիզը խիստ դժգոհ մնաց ազգային ներկայացուցչական հաստատութեան այս վարմունքից, նրա մէջ տեսնելով կառավարութեան խարդաւանքները։ Փողոցներում կազմուեցին ապստամբական ցոյցեր, հրապարակախօս Մարատը խօսում էր ազգային ժողովի մի քանի անդամների դաւաճանութեան մասին, չխնայելով նոյն իսկ Միրաբօին և պնդում էր, որ պալատական կուսակցութիւնն ուզում է ոչնչացնել այն բարիքը, որ ժողովուրդն այս մի քանի տարում ձեռք է բերել։ Այս տրամադրութեան մէջ Պարիզում լուր տարածուեց թէ պալատում օտար զինուորները երգում են յետադէմ երգեր, սպառնում են Պարիզի ժողովրդին, պոկում են եռագոյն ճակատանիշերը (կոկարդա),

որ նոր Ֆրանսիայի արտայայտութիւնն էր և պարում են զանազան պալատական կանանց, նոյն իսկ թագուհու հետ, որ խմացնում է նրանց և տալիս է զանազան ընծաներ։ Կայծակի արագութեամբ այս լուրը տարածուեց Պարիզի արուարձաններում և ժողովուրդն, որ ընդհանուր յուզումների շնորհիւ առանց այն էլ աղքատացել էր և կատաղած էր, վճռեց վրէժ առնել նրանցից, որոնք կամենում են խլել իրանցից ձեռք բերած ազատութիւնը։

Հոկտեմբերի 5-ին Պարիզը վճռեց գնալ այնտեղ, ուր նիստեր էր դումարում ազգային ժողովն և ապրում էր արքայական տունը, այսինքն՝ Վերսայլ[1])։ Ինչու համար էր ժողովուրդը գնում Վերսայլ, ոչ ոք չգիտէր և հաւանականաբար այս ճամբորդութիւն կազմակերպողներն էլ չգիտէին թէ ինչու են այդ անում։ Բայց ինչ էլ որ լինի, մի վայրկեանում ժողովուեց ահագին բազմութիւն, ուր խիստ շատ կանայք կային և օրինակելի կարգապահութեամբ շարժուեցին Պարիզից Վերսայլ։ Ամբոխին ուղեկցում էր ազգային գվարդիան իր հրամանատար Լաֆայետի գլխաւորութեամբ։

Ամբոխը չգիտէր իր անելիքը. մէկ նա երևում էր ազգային ժողովի նիստերի շինութեան մէջ, մէկ էլ շրջապատում էր արքունիքը։ Ուշ գիշերը նոյն իսկ ամբոխի և թիկնապահ զօրքի մէջ

---

1) Վերսայլը գտնուում է Պարիզից դէպի հարաւ-արևմուտք մօտաւորապէս 16 վերստի վրա. սա ֆրանսիական թագաւորների աթոռանիստ քաղաքն էր։ Ծ. Թ.

տեղի ունեցաւ փոքրիկ արիւնահեղ ընդհարում. վերջապէս ամբոխն սկսեց դուրս կանչել թագաւորին և թագուհուն։ Քիչ վարանումից յետոյ արքայական ընտանիքն երեւաց պատշգամբում, ամբոխը ուրախական աղաղակներով դիմաւորեց Լիւդովիկոսին և նրա ամուսնուն և սկսեց կանչել. «Արքայական ընտանիքի հետ միասին գնանք Պարիզ»։ Թագաւորն այդ էլ ղիջեց և հոկտեմբերի 6-ից Լիւդովիկոսը վերջնականապէս փոխադրուեց ընտանիքով Պարիզ։ Մի քանի ժամանակից յետոյ նրան հետևեց և ազգային ժողովը։ Ժողովուրդն ըստ երևոյթին ցանկանում էր, որ թագաւորը միշտ գտնուի «ժողովրդի շրջանում», որ ժողովրդի թշնամիները չկարողանան նրա վրա ազդել և որպէս զի նա կարողանայ միշտ յենուել հաւատարիմ պարիզցիների վրա։ Մի խօսքով Լիւդովիկոսի Պարիզ փոխադրուիլն անորոշ բնաւորութիւն էր կրում։ Ինչ էլ լինի, ազգային ժողովի ներկայութիւնը Պարիզում յեղափոխութեան համար խիստ լուրջ նշանակութիւն ունեցաւ. ժողովրդական ներկայացուցիչների և ժողովրդի մէջ սկսուեց անմիջապէս շփումն, որը, Պարիզի ազգաբնակութեան յեղափոխական բնաւորութեան շնորհիւ, ժողովին աւելի համարձակութիւն, աւելի հետևողականութիւն և վերջապէս աւելի յեղափոխական գոյն տուեց։

VI

Հոկտեմբերի 5—6-ի ցոյցը մի առժամանակ

ընդհատեց ազգային ժողովի զբաղմունքները. նա, արքայական իշխանութեան դէպի պարլամենտի ընդունած օրէնքն ունեցած յարաբերութեան խնդիրը սահմանելուց յետոյ, անցաւ այն հարցի քննութեան՝ թէ իսկապէս ո՞վ է կազմում ազգ, ժողովուրդ, այսինքն ո՞ւմ պիտի իրաւունք տրուի պատգամաւոր ուղարկել պարլամենտ։ Ամենից պարզ և արդար կլինէր յայտարարել, որ ամեն մի ֆրանսիացի՝ չափահասութեան հասած և ոչնչով չսահմանափակուած՝ իրաւունք ունի ձայն տալ այս կամ այն մարդուն, որին կամենում է պարլամենտ ուղարկել, ուրիշ խօսքով, լաւ կլինէր ֆրանսիական ժողովրդին տալ ընդհանուր ընտրական իրաւունք։ Մի քանիսն ասում էին, որ ամբողջ ֆրանսիական ժողովրդին տալ ժողովրդական ներկայացուցիչներ ընտրելու իրաւունք, ժողովրդի մեծամասնութեան խաւարի և տգիտութեան շնորհիւ կարող էր խիստ տխուր հետևանքներ ունենալ, նոյն իսկ այնպիսի, որից կարող էր տուժել Ֆրանսիայի վերանորոգչական գործը. ուրիշները դրանից չէին վախենում, բայց պնդում էին, որ չունևորներին չի կարելի ընտրական իրաւունք տալ, որովհետև չունևորը չի կարող պաշտպանել այն պետութեան շահերը, ուր նրան ոչինչ չի պատկանում։ Մինչև անգամ ասում էին, ով որքան հարուստ է, այնքան աւելի քաղաքական իրաւունք պիտի ունենայ և որ հայրենիքը միայն պատկանում է նրանց, որոնք այնտեղ հող կամ այլ հարստութիւն ունեն։ Չունևորը ոչինչ չունենալով չի կարող որևէ բան գնահատել, նա կապուած չէ այն երկրի հետ, ուր ծնուել է և

կարող է գնալ այնտեղ, ուր աւելի հաց կայ, ահա թէ ինչու նա հայրենասէր չէ և չի կարող պարլամենտական ընտրութեան ժամանակ ձայնի իրաւունք ունենալ։ Սակայն չպիտի կարծել որ 1789 թուի սահմանադիր ժողովում չկային ընդհանուր ձայնատուութեան իրաւունք պաշտպանողներ. ոչ, այդպիսիները կային և նրանց մէջ առաջին տեղը բռնում էր Բօբէսպիերը, բայց նրանց ձայնը մեծ նշանակութիւն չունէր մասամբ նրա համար, որ ընդհանուր ընտրական իրաւունքի պաշտպանները կասկածում էին նրա անմիջական գործադրութեան օգտակարութեան մէջ այն ժամանակուայ Ֆրանսիայում, որ հին արտօնեալ դասակարգերի վատթար կառավարութեան շնորհիւ խիստ խաւար և անկիրթ էր։ Ահա թէ ինչու սահմանադիր ժողովը մերժեց ընդհանուր ձայնատուութեան իրաւունքն և յայտարարեց հետևեալ ընտրական օրէնքը։

Բոլոր Ֆրանսիական քաղաքացիք բաժանւում են երկու մասի—ներգործական քաղաքացիներ և կրաւորական։ Միայն ներգործական քաղաքացիներն իրաւունք ունեն պարլամենտի համար ներկայացուցիչներ ընտրելու և օգտւում են քաղաքական իրաւունքներով։ Որպէս զի մէկը ներգործական քաղաքացի լինի, այսինքն ձայնի իրաւունք ունենայ, պիտի լինի 25 տարեկան, լինի Ֆրանսիացի, բնակչութիւն ունենայ մի տեղում կոնէ մի տարի, վճարի ուղիղ հարկ երեք օրեայ աշխատանաց վարձի հաւասար և վարձու ծառայի դրութեան մէջ չլինի։

Այդպիսի ներդործական քաղաքացիները կազմում էին սկզբնական խմբակցութիւններ, որոնք ուղղակի պարլամենտի պատգամաւոր չէին ընտրում, այլ ընտրում էին միայն ընտրողներ (պատուիրակ) այնպէս, որ իւրաքանչիւր 150 ներդործական քաղաքացուն դալիս էր մի պատուիրակ։ Այս պատուիրակներն իրանց միջից ընտրում էին արդէն իսկական ժողովրդական պատգամաւորներին։ Ընտրական այսպիսի ձևը, երբ ժողովուրդն իր ներկայացուցիչներին ընտրում է ոչ ուղղակի, այլ պատուիրակների միջոցաւ, յեղաշրջում է ժողովրդի իսկական կամքը, որովհետև պատուիրակները միշտ չեն համապատասխանում ժողովրդի իսկական շահերին։

Եթէ մենք կամենանք ընորոշել 1789 թուի սահմանադիր ժողովի մշակած ընտրական օրէնքը, պիտի ասենք, որ նա շատ կողմերով անարդար էր։ Նախ՝ ընտրական իրաւունքը տալով միայն ներդործական քաղաքացիներին, նա մեկուսացրեց բոլորովին այն մարդկանց, որոնք երեք օրեայ աշատանաց վարձի չափով (մօտ 4 ռուբլի) ուղիղ հարկ չէին վճարում և որոշ բնակավայր չունէին և դրանով մացրեց այն, ինչ որ այժմ մենք ասում ենք կարողութեան ցենզ, որ անհրաժեշտ է ընտրական իրաւունք ձեռք բերելու համար, և երկրորդ՝ ներդործական քաղաքացիների ու ժողովրդական ներկայացուցիչների մէջ դնելով, այսպէս կոչուած, պատուիրակներին, ընտրութիւնները դարձրեց ոչ ուղղակի, այլ կողմնակի և դրանով ժողովրդական ներկայացուցիչներին զըր-

կեց իր իսկական ընտրությունից։ Այս երկու սահմանափակումները դժգոհություն յարուցին հասարակության ռամկավարական մասի մէջ և հրապարակախօս Մարատը վրդովուեց, որ «Բաստիլիան դրաւող ժողովրդին մերժում են ընտրական իրաւունք տալ։ Այն ժամանակ ի հարկէ հերոսներին չէին հարցնում՝ արդեօք նրանք ներգործական թէ կրաւորական քաղաքացիներ են։ Երբ գնում են դէպի մահ, ոչ ոք չի առարկում, իսկ այժմ երբ պիտի գնան ընտրելու, ասում են՝ դուք դեռ անդրագէտ էք, դուք բաւական կարողություն չունէք, դուք ընտրությունների համար հասունացած չէք։ Մինթէ Բաստիլիան կործանող ժողովուրդն ընդունակ չէ գնահատել նրան, ով արժանի է Ազգային Ժողովին անդամ լինելու և ով արժանի չէ այդ պատուին»։

Ընտրական օրէնքը, որ մացրեց կարողության ցենզ և սահմանեց կողմնակի ընտրություններ, տարածուեց ոչ միայն գլխաւոր կենդրոնական ներկայացուցչական հիմնարկությանն ընտրությունների վրա, այլ և բոլոր տեղական հիմնարկությունների վրա։ Ամեն տեղ գիւղերում, գաւառներում, քաղաքներում սահմանուեց նոյն սկզբունքը. նոյն իսկ քաղաքային միլիցիան կազմուեց այդ ձևով, որի մէջ հետևաբար ընդունուում էին միայն այն անձինք, որոնք քիչ թէ շատ կարողաւոր էին։ Քաղաքական իրաւունքների այսպիսի բացառիկ շնորհները միայն կարողաւոր դասակարգին տալն իրաւունք տուեց պատմաբաններին 1789 թուի յեղափոխությունն անուանել

բուրժուական յեղափոխութիւն, որից ամենից շատ օգտուեց առևտրա-արդիւնաբերող դասը։ Մինչև 1789 թիւը նա գիւղացիների և բանուորների հետ հալածուած դրութեան մէջ էր, պետութեան մէջ նշանակութիւն ունէին միայն ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը. այժմ այս երկու դասակարգերը զիջեցին իրանց տեղը առևտրա-արդիւնաբերող դասակարգին, որը տէր դարձաւ պետութեան մէջ։

Սակայն այս փոփոխութիւնից շահուեցին և գիւղացիք և բանուորները. նախ և առաջ ոչնչացաւ ճորտութիւնը, գիւղացին դարձաւ ազատ մարդ, կարող էր լինել սեպհականատէր և իր կալուածատիրոջ ստրուկը չլինել. յետոյ, անհատի և քաղաքացու իրաւունց դեկլարացիան, որ բոլոր ֆրանսիացիներին հաւասարեց օրէնքի առաջ, մտցրեց արդարութեան սկզբունքն այն երկրի պետական կազմի մէջ, որը քիչ առաջ կամայականութեան և ապօրինութեան մարմնացումն էր։ Բացի դրանից, խօսքի և մամուլի ազատութեան յայտարարութիւնն ամբողջ հասարակութեան ձեռքը տուեց այնպիսի զէնք, որի օգնութեամբ հեշտ կարելի էր կռուել կառավարութեան զեղծումների դէմ։ Գուցէ գիւղացիք և բանուորները քիչ էին օգտուում իրանց թշնամիների դէմ կռուի ժամանակ այս անգին զէնքից, որովհետև չէին կարողանում գրել և լաւ խօսել, բայց և այնպէս խօսքի և մամուլի ազատութիւնը հիանալի ապահովութիւն էր բարձրից եկած ճնշումների դէմ։ Վերջապէս չպիտի մոռանալ, որ սահմանադիր ժողովն իր

ձեռքն առաւ ժողովրդական կրթութեան գործը, որ իր սրբազան պարտքը համարեց ուսում տարածել խաւար մարդկանց շրջանում։ Երբ մի անդամ դիւղական բազմութիւնն սկսեց ուսանել, այն ժամանակ մօտիկ ապագայում խօսքի և մամուլի ազատութիւնը կարող է նրան լաւ ծառայութիւն մատուցանել։ Այս բոլորին պիտի աւելացնել, որ իրաւանց դեկլարացիան ժողովրդին տուեց և՛ կրօնական ազատութիւն. ամեն ոք կարող էր հաւատալ ինչպէս կամենար և դրա համար ոչ ոք չէր հալածուիլ։ Եւ պատիժներն էլ յանցագործութեան համար բաւական թեթև էին, էլ չասենք այն, որ դեկլարացիայի համաձայն անկարելի էր մէկին կամայականօրէն բանտարկել։ Վարչական պատիժները, որ ամենաանարդարն էին, որովհետև ըստ հայեցողութեան էին կատարւում և ոչ ըստ օրէնքի, մարդու իրաւանց դեկլարացիայով ոչնչացուեցին և բացի դատաստանական իշխանութիւնից, ոչ ոք չէր կարող մէկին պատասխանատուութեան ենթարկել։ Այս բոլորը հարկադրում է մեզ մեծ համակրութեամբ խօսել 1789 թուի յեղափոխութեան մասին, չնայելով որ այս յեղափոխութեան հիմքը դրուած էր բուրժուական սկզբունքների վրա, այսինքն այն սկզբունքների, որոնք ասում էին թէ՝ միայն որոշ կարողաւորներին է պատկանում պետական գործերին մասնակցելու և կառավարելու իրաւունքը։

VII

Հին Ֆրանսիայի ամենամեծ ապօրինութիւններից մինը հարկերի չափազանց անարդար բա-

ժանուն էր. այն ժամանակ, երբ ազնուականութիւնն ու հոգևորականութիւնը ոչինչ չէին տալիս, քաղաքացիներից ու գիւղացիներից բաղկացած երրորդ դասակարգն իր ուսերի վրա էր տանում պետական անագին ծախքը, որ հասնում էր 400 միլլիոն ֆրանկի։ Եւ հարկերի բաշխման անարդարութիւնն էլ աւելի մեծանում էր նրանով, որ համարեա պետական բոլոր ծախքերը գնում էին յոգուտ արտօնեալ դասակարգերի։ Նախ և առաջ իբրև կենսաթոշակ տրւում էր 32 միլլիոն ֆրանկ զանազան ազնուականներին, որոնց նախնիքներն իբր թէ ֆրանսիական կառավարութեան որ և է ծառայութիւն էին մատուցել. յետոյ 25 միլլիոնից աւելի ծախսում էր արքայական տունը զանազան ընդունելութիւնների համար, որոնք մարդկանց միանգամայն անպէտք էին, վերջապէս զօրքը կլանում էր համարեա 100 միլլիոն։ Եթէ այստեղ աւելացնենք զանազան ատենաւորների, որոնք ստանում էին մեծ ռոճիկներ և պատկանում էին ազնուական դասին, ապա մեզ համար պարզ կլինի, որ հին Ֆրանսիայում երկու բարձր դասակարգերն ապրում էին ի հաշիւ ժողովրդեան. վերջինս վճարում, աշխատում և տանջւում էր, իսկ վերին դասակարգերն անգործ նստելով օգտւում էին ժողովրդեան քրտինքով ձեռք բերած հարստութիւնից, քէֆ էին անում և ապրում էին խիստ լայն չափերով։ Եւ այս բանում հոգևորականութեան և ազնուականութեան մէջ տարբերութիւն չկար. թէ մէկ և թէ միւս դասակարգը միատեսակ հարուստ էր, թէ մէկ և թէ միւս դա-

սակարգը ժողովրդական փողերը ջուրն էր գցում, թէ մէկ և թէ միւս դասակարգը քամում էր ժողովրդի հիւթը նրա համար, որ շռայլօրէն ապրի և բաւականութիւն տայ իր քմահաճոյքներին։ Հաւասարութեան հետամուտ լինելն այն ժամանակ արտօնեալ դասակարգերի մէջ այնքան մեծ էր, որ նրանք ահագին հարստութիւնն էլ աննշան և անբաւական էին համարում և ազնուականները հոգևորականների հետ միասին ամեն կերպ աշխատում էին կողոպտել դանձարանը, իսկ վերջինս սիրով ընդառաջ գնալով վերին դասակարգերի ագահ ախորժակին, աւելի ու աւելի սնանկանում էր։ Ամբողջ հասարակութիւնը ձգտում էր դառնալ ազնուական կամ հոգևորական, որովհետև միայն այն ժամանակ կարելի էր հարստանալ և ապրել ուրիշի հաշուով։ Բոլոր հարուստ վաճառականներն ու գործարանատէրերը դրամով գնում էին ազնուական տիտղոսն և դրանով միանգամ ընդ միշտ ազատուում էին ծանր հարկերից։ Պետութիւնը սիրով «հասարակ մահկանացուներին» փողի համար բարձրացնում էր ազնուական կոչման. բայց որքան շատ էին անցնում երրորդ դասակարգից դէպի վերին խաւերը, այնքան նրա դրութիւնն աւելի ու աւելի վատանում էր. հարկերի բեռը ընկնում էր քիչ թուով մարդկանց վրայ, ուստի և աւելի խիստ էր զգացուում նրա ծանրութիւնը։ Ոչ միայն առանձին անհատներն էին գնում իրանց համար նուազ հարկ տալու արտօնութիւնն, այլ և ամբողջ քաղաքներ։ Այսպէս օրինակ՝ Հաւր քաղաքը բոլորովին չէր վճարում որոշ հարկ, իսկ Բօվէ քաղաքը վճարում էր 1 լիվր

իրաքանչիւր բնակչի համար, փոխանակ 3½-ի։

Այսպիսի քաղաքականութիւնը վատ էր աղդում պետութեան ֆինանսների վրա, և զարմանալու ոչինչ չկայ, որ ամեն տարի Ֆրանսիական կառավարութիւնն ստիպուած էր խոստովանուել, որ նրա ծախքերը դերակշռում են եկամտին։ Պատգամաւորների հրաւէրի նախօրեկին ամենքը միաբերան ասում էին, որ պետութեանն սպասում է ֆինանսական անանկութիւն. ֆինանսական կատարեալ անանկութիւնն ու քայքայումն իսկապէս պատճառ եղաւ 1789 թուին ժողովրդական ներկայացուցիչներ հրաւիրելու։ Երբ Լիւդովիկոս XVI-ը համաձայնեց երեք դասակարգերից պատգամաւորներ հրաւիրել, նա հրովարտակն ստորագրեց միայն նրա համար, որ ֆինանսների նախարար Նեկկերն ասաց, թէ առանց ժողովրդի օգնութեան պետութիւնը հարկադրուած կլինի անանկանալ։ Աղլային ժողովը, կամ ինչպէս առաջ անուանում էին նրան՝ դերագոյն ատեանը, հրաւիրուեց հին Ֆրանսիայի ֆինանսական դրութիւնը շտկելու համար, բայց երրորդ դասակարգի ներկայացուցիչները լաւ էին հասկանում, որ պետութեան ֆինանսները կարելի է ազատուել այն ժամանակ, երբ նախապէս կվոխուի հնացած Ֆրանսիայի կազմը, ահա թէ ինչու նրանք իրանց գործունէութիւնն սկսեցին անհատի և քաղաքացու ազատագրոյթիւնով և առհասարակ ընդհանուր սկզբունքներով։ Միայն այժմ, երբ հին Ֆրանսիական պետական կազմն իր անարդար արտօնութիւններով ոչնչացաւ, կարելի էր լրջօրէն ձեռնարկել

պետությունն մեջ ֆինանսական հաստատակշռությունն հաստատելուն և սահմանելուն։

Իսկապես ասած օգոստոսի 4-ի գիշերը, երբ հոգևորականությունն ու ազնվականությունը հրաժարվեցին իրանց արտոնություններից և ի միջի այլոց պետությունն որոշ տուրք չտալու արտոնությունից, այդ գիշերը, ասում ենք, արդեն մի բան արված էր ֆինանսական դրությունն լավացնելու իմաստով. ի հարկէ, երբ հոգևորականությունն ու ազնվականությունը յոգուտ պետությունն սահմանված հարկերը տային, գանձարանի մուտքը դրանով կաւելանար, հետևաբար պետությունը չէր սպառնալ սնանկություն կամ քայքայումն։ Այդ կարծիքին էին և արտոնեալ դասակարգերը. նրանք կարծում էին, որ օգոստոսի 4-ին իրանց արած «զոհաբերությունից» յետոյ էլ ոչինչ չեն պահանջիլ իրանցից, և որ նրանք արդէն հանգիստ կլինեն իրանց նիւթական դրությամբ։ Բայց երրորդ դասակարգի ներկայացուցիչներն այդպէս չէին մտածում։ Նրանք տեսնում էին, որ պետության ֆինանսները այնպիսի քայքայման էին հասել, որ խիստ կարական միջոցներ էին հարկաւոր Ֆրանսիայի ֆինանսական գործերը կարգի դնելու համար և որ արտոնեալ դասակարգերի «ազնիվ զոհաբերությունը» քիչ կօգնի արդէն անկման հասած պետական գանձարանին։ Բայց ինչ միջոցներ պիտի մտածել, որ ինչպէս Միրաբոն էր ասում, կալելի լինէր հեռացնել սնանկության ուրուականը։

Հոգևորականությունն այն ժամանակ շատ հարուստ էր. նրան էր պատկանում Ֆրանսիական

հողի համարեա 1/3 մասը, բացի դրանից կաթոլիկական եկեղեցիներն ու վանքերն ունէին անհաշիւ թանկագին իրեր և հարստութիւններ։ Հոգևորականութեան կարծիքով այս բոլորը կազմում էին կաթոլիկական եկեղեցու սեպհականութիւնը. այդ հարստութիւնները մեծ մասամբ ստացուել էին այս կամ այն թողութիւն ստացած մեղսապարտներից կամ հանգուցեալներից, որոնք ցանկացել էին կոտակել իրանց կարողութիւնը եկեղեցուն։ «Դա սրբազան սեպհականութիւն է— ասում էին հոգևորականութեան ներկայացուցիչները—և մենք ոչ ոքի թոյլ չենք տալ որ և է հարուած հասցնել նրան. չէ՞ որ մարդու իրաւանց դեկլարացիան սեպհականութիւնը սրբազան է համարում, որ պիտի ապահովուի»։ «Այո, պատասխանում էին երրորդ դասակարգի ներկայացուցիչները—սեպհականութիւնը սուրբ է, բայց դուք չէք յայտնի աշխարհի, դուք զրկուած էք սերունդ ունենալուց, հետևաբար և պիտի զրկուէք ժառանգութիւնից. եկեղեցու հարստութիւնն ազգինն է և դուք միայն իրաւունք ունէք ժամանակաւորապէս օգտուելու։ Մինչև այժմ ձեզ տալիս էին հող կամ իրեր, իսկ այսուհետև դուք կստանաք ռոճիկ նման մնացած բոլոր պաշտօնեաների»։ Ազգային ժողովի հայեցակէտն այսպէս էր հոգևորականութեան կարողութեան մասին։ Քահանաները, եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները կարող էին պետութիւնից ռոճիկ ստանալ, իսկ նրանց հողը դառնալու էր պետութեան սեպհականութիւն։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հոգևորականութիւնն ազգային ժողովի այդպիսի որոշումից խիստ դժգոհ մնաց և բոլոր միջոցներով սկսեց կռիւ մղել «կրօն խախտողների» դէմ։ Ժողովրդական մութ մասսաների մէջ տարածուեցին բրօշիւրներ և կոչեր, որ դրել էին հոգևոր կոչումն ունեցող անձինք, ուր ասացուցանում էին, որ ազգային ժողովը հոգևորականութեան զրկելով հողից և դրա փոխարէն սովորական ռոճիկ սահմանելով, խախտում է կաթոլիկական կրօնը, կամենում է արմատախիլ անել կրօնական զգացմունքն ժողովրդի միջից, վակել բոլոր եկեղեցիները և ամբողջ Ֆրանսիան դարձնել անաստուած երկիր։ Մինչ դեռ սահմանադիր ժողովը հանգիստ շարունակում էր իր աշխատանքը։

Եթէ հոգևորականները ներկայանում են իբրև որոշ հիմնարկութեան ծառայողներ, ուրեմն պիտի երդուին տան հաւատարմութեան նոր սահմանադրութեան, Ֆրանսիայի պետական նոր կազմին։ «Կողոպտուած» հոգևորականութիւնը սկզբում չէր կամենում երդուել «անաստուած» սահմանադիր ժողովին. հոգևորականութեան մէջ սկսուեց պառաքտու�, ոմանք երդման կողմնակից էին, միւսները՝ հակառակ. ազգային ժողովը սկսեց հալածել նրանց, որոնք հրաժարւում էին երդուել։ Ի պատասխան այս հալածանքի, աւելի ուժգին գրգռուեց սկսուեց հոգևորականութեան կողմից սահմանադիր ժողովի դէմ և ազնուականութիւնը պաշտպանում էր հոգևորականութեան, զգալով, որ հասել է իրանց այնքան ազատ և լայն կեանքի

վերջը։ Վերին երկու դասակարգերի կողմնակից էր և թագաւորը, որ դժգոհ էր նրանով, որ ազգային ժողովը սահմանել էր մշտական և հաստատուն վերահսկողութիւն բոլոր պետական գործերի վրա և յայտարարել էր ժողովրդի գերագահութիւնը, զրկելով թագաւորին իւր անսահման իշխանութիւնից։ Թագաւորը վերին երկու դասակարգերի հետ սկսեց մաքառել ազգային ժողովի դէմ. արտօնեալներից շատերը, դրանց թւում և թագաւի եղբայրները գնացին արտասահման օտար միապետների հետ բանակցելու, թէ արդեօք հնար չկա՞ ուժով Ֆրանսիային ստիպել յետ գնալ և հրաժարուել այն բոլորից, ինչ որ արել էր սահմանադիր ժողովը։ Եւ այս ոճրագործ մտադրութիւնը—դիմել օտարերկրեայ ուժի—Լիւդովիկոս XVI թագաւորն էլ համամիտ էր։

Ֆրանսիայի «հայրենասէրները» իրանց ամենալաւ քաղաքացիների ուսի վրայից ձեռք էին մեկնում աւստրիական և պրուսական զինուորներին, որ նրանք գան և փրկեն Ֆրանսիան Ֆրանսիական ժողովրդական ներկայացուցչական հիմնարկութիւնից։ Սրանից յետոյ ինչ կայ զարմանալու, որ Ֆրանսիան, 1789 թուին այնքան անձնուէր լինելով իր Լիւդովիկոս XVI-ին, երեք տարուց յետոյ հասարակապետութիւն յայտարարեր և ազգային ժողովի որոշմամբ համաձայնէր մահուան դատապարտել նրան, ով փոխանակ պաշտպանելու երկիրը, Ֆրանսիական սահմանների մօտ էր կանչում օտարերկրեայ զօրքերին։

VIII

Հոգևորականութիւնից խլուած հողերը դարձան ազգային և սահմանադիր ժողովը վճռեց մաս մաս վաճառել մանր գիւղացիների, սակաւահող մարդկանց վրա։ Այս միջոցով նախ՝ ժողովը ժողովրդական և սիրելի դարձաւ և երկրորդ՝ միանգամից շտկեց քայքայեալ ֆինանսական դրութիւնը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եկեղեցական հողի վաճառումն, որ ինչպէս ասացինք, համարեա ամբողջ Ֆրանսիայի 1/3 մասն էր կազմում, չէր կարող մի քանի օրում կատարուել և այդպէս արագ վաճառումն ազգային ժողովին ամենևին շահաւէտ չէր, որովհետև խոշոր հողամասերի վաճառումը կիջեցնէր հողի արժէքը։ Ահա թէ ինչու ազգային ժողովը որոշեց բաց թողնել առանձին անդորրագրեր, որոնք կոչուեցին թղթադրամներ (ասիգնացիա) և որոնք փոխարինեցին իսկական դրամին։ Այս անդորրագրերն ապահովուած էին ազգային հողով, որ ստացել էին հոգևորականութիւնից և ժողովը դանձարան մտած հողարժէքի չափով ոչնչացնում էր յիշեալ անդորրագրերից և փոխարինում էր հնչիւն փողով։ Այսպիսով փող կար դնա հողը չծախուած. ճիշդ է, դրանք թղթէ փողեր էին, բայց ամենքն էլ գիտէին, որ փոխարկուելու էին հնչիւն դրամով, երբ ազգային ժողովը կվաճառի հոգևորականութիւնից խլուած հողը, իսկ որ ժողովը կվաճառի այդ հողը, ոչ ոքի համար հարց չէր. և թղթադրամներն անցնում էին ոսկեդրամին հաւասար,

տանց որ և է մեկի մեջ արժեքի մասին կասկած յարուցանելու։

Եթէ սահմանադիր ժողովի մեջ մարմնացած կառավարութիւնն այդ ճանապարհով միանգամից ոտքի կանգնեցրեց ֆրանսիական ֆինանսները, միւս կողմից էլ կապեց իր հետ ամբողջ մանր գիւղացիութիւնը։ Այդ օրից ֆրանսիական գիւղացին դարձաւ յեղափոխական և նրան եթէ հարցնէիր ինչու համար է 1789 թուի բարեփոխութիւնը գնահատում, նա կպատասխանէր. «Նա տուեց ինձ ազատութիւն, նա տուեց ինձ հող»։ Ոչ մի մութ ուժ չի կարող գիւղացուն կտրել 1789 թուականից, և իր հարստութիւնից զրկուած կաթոլիկ հոգևորականութիւնը յեղափոխութիւնից կյաղթուէր հէնց նրա համար, որ գիւղացիական մասսան բացարձակ կյայտարարէր հոգևորականութեան ներկայացուցիչներին՝ ինչպէս կարող ենք ձեր յետևից գալ ընդդէմ յեղափոխականների, երբ գիտենք, որ վերջինների «ոճրագործութիւնը» կայանում է միայն նրանում, որ նրանք ձեր հողը մեզ են տալիս... Ի հարկէ, տեղ տեղ, մանաւանդ Վանդէի գաւառում, գտնուեցին այնպիսի գիւղացիներ, որոնք հոգևորական բանակի ճարպիկ գրգռիչների շնորհիւ ապստամբեցին ազգային ժողովի դէմ այն պատճառով, որ կամենում էր նրանց բարիք անել. բայց գիւղացիութեան այս տգէտ մասը խեղդուեց ընդհանուր հրճուող գիւղացիների մէջ, որոնք ուրախանում էին հոգևոր հողի մանր սեպհականատէրերին վաճառելու առիթով։ Այդ ժամանակից Ֆրանսիան դարձաւ մանր ազատ

դիւղացիութեան երկիր, դրանով էլ բացատրւում է 19-րդ դարում Ֆրանսիայում տեղի ունեցած շատ տխուր դէպքեր, որ այստեղ չենք շօշափելու։

Հոգևորականութեանը զրկելով հարստութիւնից, սահմանադիր ժողովը որոշեց, որ պիտի հոգևորականութեան վրա նայել ինչպէս ծառայող դասակարգի վրա, ուստի սահմանեց խիստ կանոններ նրանց վերաբերմամբ։ Վերջինս ըստ ամենայնի պարտաւոր էր ենթարկուել քաղաքական իշխանութեան և ոչ թէ Հռովմի պապին. նա պիտի երդուէր նոր սահմանադրութեան, և բոլոր քահանաներն ու եպիսկոպոսները չէին նշանակուելու հոգևոր բարձր իշխանութիւնից, այլ ընտրուելու էին ժողովրդից նոյն ձևով, ինչ ձևով ընտրւում էին պետական ներկայացուցչական հաստատութեան պատգամաւորները։ Բացի դրանից, քահանաների թիւը համապատասխանելու էր Ֆրանսիայի վարչական բաժանման և հոգևորականութեան վերաբերութեամբ գործադրուեց նոյն հողասահմանային (տերիտորիալ) սկզբունքը, ինչ որ միւս հաստատութիւնների վերաբերմամբ։ Նախկին 134 թեմերը փոխարինուեցին 83-ով, այսինքն այնքանով, որքան նահանգ (դեպարտամենտ) կար նոր Ֆրանսիայում։ Հոգևոր կեանքի ներքին գործերում աղգային ժողովի խառնուելն առիթ տուեց խօսելու, որ ժողովը կամենում է Ֆրանսիայում ոչնչացնել կաթոլիկ կրօնը և այն եպիսկոպոսները, որոնք դժուարանում էին հողը խլելու համար սահմանադիր ժողովի դէմ դուրս գալ, այժմ արդէն առիթ

ունէին խօսելու յեղափոխականների «անաստուած» քաղաքականութեան մասին։ Հին հոգևորականութեան կազմակերպութեան պահպանութեան դրօշակի տակ միացան նրանք, որոնք խոր հոգով վրդովուած հին սահմանադիր ժողովի «աւազակային» քաղաքականութիւնից և այս դրօշակի տակ մտան նոյնպէս այն գիւղացիները, որոնք կարծում էին թէ քահանաների ընտրութիւնը կտանի դէպի կրօնական անկում։

Յեղափոխութեան թշնամիները յարմար առիթ գտան ապստամբութեան դրօշակ բարձրացնելու սահմանադիր ժողովի դէմ։ Հոգևորականութեան վարմունքը խրախուսում էր և Լիւդովիկոս XVI թագաւորը, որն անկեղծ կերպով կարծում էր թէ 1789 թուի գործիչները մահափորձ են անում կաթոլիկ կրօնի դէմ։ Քանի որ թագաւորը հոգևորականութեան կողմնակից էր, վերջինս ուժ զգաց և աղնուականութեան հետ որոշեց ճնշել յեղափոխութիւնը։ Բայց ինչպէս անել։ Երկիրն ընդհանրապէս համակրում էր յեղափոխական գործիչներին և նրանց օգնութեան վրա յոյս դնել չէր կարելի։ Օտար պետութիւնները չցանկանալով իրանց չվերաբերեալ գործին խառնուել, բաւականացան միայն խորհուրդներ տալով և իրանց զօրքերը չշարժեցին դէպի Ֆրանսիական սահմանները։ Մնում էր միայն մի միջոց- այն է, պիտի թագաւորը փախչէր արտասահման, այնտեղ իրեն հաւատարիմ մնացած զինուորներից և օտար ազգի վարձու զինուորներից զօրեղ բանակ կազմէր և սրա օգնութեամբ խեղդէր յե-

զափոխական հոսանքը, որ բռնել էր Ֆրանսիական ժողովրդի մեծ մասին։ Այսպէս ծնունդ առաւ Ֆրանսիական թագաւորի փախստեան ծրագիրը։ Այս փախուստը մտածելով, թագաւորն ամենն կերպ ծածկում էր թէ սահմանադիր ժողովից և թէ ժողովրդից. 1790 թուի յուլիսի 14–ին, երբ ամբողջ Ֆրանսիական ժողովուրդը տօնում էր Բաստիլիայի առման տարեդարձը, Լիւդովիկոսը հանդիսաւորապէս երդուեց, որ ճշդութեամբ կը-գործադրի սահմանադրութեան հրահանգներն և այդ երդումը նա կրկնեց ազգային ժողովին ուղղած հրովարտակի մէջ այն օրը, երբ վերջնականապէս ընդունուեց հոգևորականութեան վերաբերեալ նոր օրէնքը, օրէնք, որ ամենից շատ նպաստեց թա-գաւորի փախստեան։ Այսպիսով Լիւդովիկոսն ոչ միայն ծածկում էր ժողովրդից իր ծրագիրը, այլ և աշխատում էր նրանց խաբել, համոզելով ազ-գային ժողովին, որ ինքն անկեղծ և անձնուէր է։ Նա, Ֆրանսիայի թագաւորը, ստորագրում էր մի և նոյն ժամանակ այսպիսի թղթերի տակ—մի կողմից յայտարարւում էր, որ թագաւորը կամենում է նոր սահմանադրութիւնը գործադրել, միւս կող-մից գաղտնի գրագրութիւն էր սկսուած արտա-սահման փախած արքայազուների հետ՝ թէ ինչպէս լաւ կլինի պատրաստել թագաւորի փախուստը սահմանադրութիւնը ոչնչացնելու նպատակով։ Սրանից յետոյ ինչ զարմանալու բան կար, եթէ թագաւորն այնպէս խիստ պատժուելու լինէր ժողովրդական ներկայացուցիչների կողմից։

1791 թուի յունիսի 12-ին Ֆրանսիայի մայրաքաղաքում տարածուեց սոսկալի լուր. դիշերը դաղտնաբար թագաւորը թողել էր Պարիզն ու փախել էր։ «Այս լուրը, գրում է Պրիւդոմ, բոլորին շփոթեցրեց, և բոլորը մտահոգութեամբ գնում էին դէպի արքայական պալատը, կարծես կամենալով անձամբ համոզուել թէ իսկապէս թագաւորը թողել է իր ժողովուրդն ու փախել է արտասահման»։

Ժողովրդական այս տարակուսանքը շուտով տեղի տուեց երկիւղին, իսկական սարսափին։ Ամենքին թւում էր թէ թագաւորի բացակայութեամբ երկրի դրութիւնը վտանգաւոր կլինի և թագաւորը կարծես թէ իր հետ տարել էր այն մոգական թալիսմանը, որ միայն կարող էր Ֆրանսիային պաշտպանել։ Բայց այս երկիւղն էլ երկար չտևեց։ «Կարծես միանգամից, ասում է Պրիւդոմ, բոլորի հայացքը դարձաւ դէպի Ազգային Ժողովը և այդ հայացքի մէջ կարելի էր կարդալ՝ «ինչ արած, թագաւորը չկայ, մեր փրկութիւնն Ազգային Ժողովումն է. թող թագաւորը գնայ, ուր կամենում է, հօ ազգը մնացել է»։ Եւ մի բոպէում ամենքի սիրտը հանգստացաւ, ժողովուրդը նոյն իսկ սկսեց հանաքներ անել թագաւորի փախուստի առթիւ և այս հանաքները շատ էլ ախորժելի ընաւորութիւն չէին կրում Լիւդովիկոս XVI-ի համար։ Սոսկալի տպաւորութիւն թողեց թագաւորի փախուստը սահմանադիր ժողովի վրա էլ։ Նա

խսկոյն ժողովուեց հարցը քննելու թէ ինչ անել։ Ամբիոնի վրա է պատգամաւոր Դեմենիէն. «Պարոնայք, տեղի է ունեցել սոսկալի ոճրագործութիւն. Ազգային ժողովը արդէն վերջացրել էր իր պարապմունքները, սահմանադրութիւնն արդէն պատրաստ էր, սկսուել էր միանգամայն խաղաղ ժամանակ, և այս վայրկենին հասարակական խաղաղութեան թշնամիները մտածել են միանգամից վրէժ լուծել ամբողջ ազգից։ Յունիսի 20 լոյս 21-ի գիշերը թագաւորն ու ամբողջ արքայական ընտանիքը գողացուել են» . . .

Պատգամաւոր Բեյերեր. խիստ ընդհատելով. «Դա սուտ է. թագաւորին չեն գողացել, նա խայտառակ և վախկոտ կերպով փախել է»։

Դեմենիէ . . . Ես խնդրում եմ ինձ չընդհատել և լսել ուշադրութեամբ, ինչպէս այդ պահանջում է ներկայ լուրջ րոպէն։ Ֆրանսիան կամենում է ազատ լինել և ազատ էլ կլինի։ Ֆրանսիայի թշնամիները կամենում են ստիպել յեղափոխութեանը յետ դնալ, բայց յեղափոխութիւնը յետ չի դնալ։ Սորուկներն ու յետադէմները պիտի համոզուեն Ֆրանսիական ազատութեան հիմնադիրների համարձակութեան մէջ և մենք ի դէմս ամբողջ ազգի հանդիսաւորապէս յայտնում ենք, որ ազատութիւնը կպահպանուի կամ թէ մենք կմեռնենք։ Ասում են, որ մենք խռովարարներ ենք. այո, անկասկած մեր սահմանադրութիւնը խռովարարների գործ է։ Դուք գիտէք Ֆրանսիայում որքան խռովարարներ կան. նրանք 24 միլլիոն են (աղմկալից հաւանութիւն)։ Մեզ մեղադրում են, որ

սահմանափակել ենք թագաւորի իրաւունքը, բայց ես յայտարարում եմ, որ Ֆրանսիայի ներկայացուցիչներն ոճրագործներ կլինէին, եթէ յօդուտ մի մարդու զոհէին 24 միլիոն մարդու շահերը։ Թող սահմանադրութեան թշնամիները հասկանան, որ Ֆրանսիայում հին ստրկական դրութիւնը վերականգնելու համար պէտք է ոչնչացնել ամբողջ ազգը։ Թող բռնակալութիւնը կատարի այդ ոճրագործութիւնը. նա կամ կխորտակուի, կամ կմտնի մի երկիր, ուր չի գտնուիլ ոչ մի կենդանի շունչ (աղմկալից ծափահարութիւն)։

Դեմենիէի ճառը չնայելով ձևի խստութեան, իսկապէս մեղմ էր. սահմանադիր ժողովը պիտի յայտարարէր, որ թագաւորն ու նրա ընտանիքը յափշտակուած են «ժողովրդի թշնամիներից» և որ մինչև թագաւորի վերադարձն ամբողջ իշխանութիւնը կենդրոնանում է ազգային ներկայացուցիչների ձեռքում։

Թագաւորի փախուստը կատարուել էր պալատական կուսակցութեան մանր ինտրիգների շնորհիւ, որին առանձին նշանակութիւն չպիտի տալ։ Եւ այն ժամանակ, երբ Ազգային Ժողովն այդպիսի որոշումն ընդունեց, նա հրաման արձակեց բռնել փախած թագաւորին։ Յունիս 22-ին թագաւորին բռնեցին Վարին քաղաքում և սահմանադիր ժողովի երեք անդամների ուղեկցութեամբ և 16 թնդանօթների պաշտպանութեամբ բերեցին Պարիզ։ Սահմանադիր ժողովի հրամանի համաձայն ոչ ոք իրաւունք չունէր ոչ ողջունելու, ոչ վիրաւորելու վերադարձող թագաւորին և Լիւդովի-

կոսը մտաւ Պարիզ մայթերի վրա խոնուած ամբոխի մեռելային լռութեան մէջ։ Նա ինքն էլ իրան վատ էր զգում և պալատ վերադառնալով, ինչպէս ասում են, ընկաւ բազկաթոռի վրա բացականչելով։ «Սակայն յիմար ճամբորդութիւն կատարեցի»։

Սահմանադիր ժողովը իր կողմից հարց բարձրացրեց թէ՝ Լիւդովիկոս XVI-ը փախուստի և սահմանադրութիւնը խախտելու համար պատժի պիտի ենթարկուի թէ ոչ։ Երկար վիճաբանութիւններից յետոյ որոշուեց, որ թագաւորի անձը սուրբ է, ուստի և չի կարող պատժի ենթա թեան առարկայ դառնալ։ «Թագաւորին յափշտակել էին կամ աշխատում էին յափշտակել սահմանադրութեան թշնամիները, նրանց վրա էլ միայն պիտի թափուի ժողովրդական ներկայացուցիչների բարկութիւնը»։ Թէև ազգային ժողովի այս որոշումը վկայում էր, որ Ֆրանսիայի առաջին ներկայացուցչական ժողովը խորը միապետական զգացմունք ունէր, սակայն թագաւորի փախստեան առթիւ արտասանած ճառերն ապացուցանում էին, որ մօտիկ է Ֆրանսիայում հասարակական կարծիքի յեղաշրջումն և հերիք է մի երկու այդպիսի դէպքեր էլ, որ վերջնականապէս ընկնէր արքայական արժանիքը Ֆրանսիայում և Ֆրանսիական ժողովուրդը դառնար հասարակապետական։

Լիւդովիկոսի դէմ առաջինը խօսեց Բօրեսպիերը. նրա կարծիքով չի կարելի թագաւորի սրբազան և անձեռնմխելի անձը բարձր դասել ժողովրդի անձեռնմխելի իրաւունքից։ Երբ միանգամ վերջինս խախտուած է, ապա դրանով խախ-

տում է և արքայական անձի անձեռնմխելիութիւնը։ Մօտելով Լիւդովիկոսի դէմ, Բօրեսպիերը մի և նոյն ժամանակ շտապեց յայտարարել, որ նա հակառակ է հասարակապետութեան և որ դեռ բաւական չէ թոթափել մի մարդու բռնակալութիւնը. «Ես արհամարհում եմ այնպիսի կառավարութիւնները, ուր իշխում են խռովարարները»։ Այդ բոլոր երևում է Ֆրանսիայի ապագայ կառավարիչը, որ դեռ պետական կառավարութեան որոշ ձև չէր մշակել և խոստովանելով, որ Լիւդովիկոս XVI-ը իրրև թագաւոր անպէտք է, չէր կարողանում սահմանադիր ժողովին որևէ խորհուրդ տալ։

Աւելի որոշ և խիստ խօսեց ժողովրդական ներկայացուցիչ Գրեգուարը. «Ժողովրդական անվստահութիւնը-բացականչում է նա-ամենաաւելի միջոցն է փրկելու ապատ ազգը։ Բայց դուք կարող էք ստիպել ժողովրդին, որ Լիւդովիկոսին վստահութեամբ վերաբերուի, եթէ նոյն իսկ նա երդուի հաւատարիմ մնալ սահմանադրութեան. ապա ով ձեզանից կերաշխաւորի, որ նա կ'կատարի իր երդումն։ Ես պահանջում եմ, որ անմիջապէս հրաւիրուեն ընտրողներն և անմիջապէս կատարուի ազգային ժողովի (կոնվենտ) ընտրութիւն»։ Եւ համարձակ պատգամաւորը բաց է թողնում այն հարցը թէ ինչով պիտի զբաղուի ազգային կոնվենտը՝ նա պիտի ասի, որ Լիւդովիկոսը կորցրել է ժողովրդեան վստահութիւնը, թէ պիտի նոր թագաւոր ընտրի, կամ հասարակապետութիւն յայտարարի։ Գրեգուարի ճառի մէջ այդ հարցերի պատասխանը չենք գտնում. երևի նա ինքն էլ

այդ մասին իրան հաշիւ չէր տալիս, բայց Բօ-
բեսպիերի պէս չէր յարձակւում հասարակապե-
տութեան դաղափարի դէմ, թողնելով ընտրողնե-
րին որոշել այդ հարցը։

Գրեդուարից յետոյ ամբիոն բարձրացաւ Վադիէն, որը ոչ միայն պաշտպանեց նախորդ հռետորին, այլ աւելի որոշ պահանջեց Լիւդովիկոս XVI-ի դահից հրաժարումն։ Նա ասաց. «Մեծ ոճրագործութիւնը կատարուած է, յանցաւորներն ակներև են։ Ամբողջ աշխարհն իր հայացքն ուղղել է դէպի մեզ և մեր սերունդներն էլ պիտի օրհնեն կամ անիծեն մեզ։ Այս բոպէին ամեն ինչ հրապարակի վրա է դրուած։ Կամ դուք նոր Ֆրանսիային հաստատուն հիմքերի վրա պիտի դնէք, կամ պիտի կործանէք նրան։ Ես ձեզ հարցնում եմ. կարող է թագաւորը, որ խախտել է երդումը, փախել է իր դիրքից, տարել է իր հետ ազգայ թագաւորին, ցանկացել է կործանել երկիրը, կարող է, հարցնում եմ ձեզ, այդպիսի մարդը կոչուել ֆրանսիական թագաւոր։ (Թոյլ հաւանութիւն)։ Այն օրից, երբ Լիւդովիկոսը հրաժարուեց թագից (բոդոքեեր), չի կարող խօսք լինել նրա անձի անձեռնմխելիութեան մասին։ Կարող է ձեզանից մէկը ենթադրել, որ թագակիր աւազակը (խիսս բոդոքեեր, որ արգելում է հռետորին խօսել)... կարելի է թոյլ տալ, որ թագակիր աւազակն իրաւունք ունենայ անարգել և անպատիժ սպանել, այրել և օտար զինուորներին հրաւիրել իր երկիրը։ Այդպիսի ենթադրութիւնը տանում է դէպի Ներոնների և Կալիգուլաների թագաւորու-

թիւնը... Երբ հարկ կլինի հրատարակել օրէնք ընդդէմ դաւաճանների, մի՞թէ դուք այն ի կատար կածէք յանուն փախստականի և երդմնազանցի։ Ոչ, երբէք ապատ Ֆրանսիան այդպիսի պղծութիւն չի կատարի... Ինձ մեղադրում են, որ Մարատի լեզուով եմ խօսում, ինչ անենք, ես սովոր չեմ ամբիոնից խօսելու, ես խօսում եմ այնպէս, ինչպէս որ թելադրում է իմ պարտքը ընտրողներիս առաջ և կխօսեմ մինչև անգամ կեանքս վտանգելով։ Ես պահանջում եմ, որ հրաւիրուի կենդրոնական կոնվենտը, որը յայտարարի Լիւդովիկոս XVI-ի հրաժարումն Ֆրանսիական թագից»։

Գրեգուար-Վադիէի առաջարկութիւնն, ինչպէս մենք յիշեցինք, չընդունուեց։ Սահմանադիր ժողովը որոշեց, որ արքայական անձի անձեռնմխելի ընտրութիւնը չի թոյլ տալիս նրան զրկել գահից և բաւականացան միայն նրանով, որ թագաւորին «յափշտակողները» պատասխանատուութեան ենթարկուեցին։ Այժմ տեսնենք թէ ժողովուրդը ինչպէս վերաբերուեց դէպի թագաւորի փախուստը և այդ փախուստը ինչ հետևանքներ ունեցաւ երկրի համար։

X

Յեղափոխութեան առաջին օրից ժողովուրդն ուշադրութեամբ սկսեց ականջ դնել թէ ինչ է խօսւում և գործւում սահմանադիր ժողովում. այս քիչ է, նա աշխատում էր հնար եղածի չափ ազդել ժողովի որոշումների վրա և այդ նպատա-

կով յաճախ ժողովրդի անունից տալիս էին այս կամ այն հանրագրութիւնը, ուր արծարծւում էին ժողովրդական ցանկութիւններն ու պահանջները։ Որպէս զի հեշտ և լաւ քննուեն հասարակական խնդիրներն և աղդեն սահմանադիր ժողովի տրամադրութեան վրա, ժողովուրդը սկսեց կարդալ ամենօրեայ լրագրերը, յաճախ միասին հաւաքուել, կազմակերպուել, միտինգներ և ակումբներ կազմել, ուր տեղի էին ունենում այսպիսի վէճեր ու հակաճառութիւններ ժողովուածների մէջ, ինչպէս սահմանադիր ժողովում։ Առանձնապէս այն ժամանակ յայտնի էր եակոբինների ակումբը, որն ունէր բաժանմունքներ ամբողջ Ֆրանսիայում և Պարիզից տուած նշանով կարող էր իսկոյն շարժել հազարաւոր ժողովուրդ։ Շնորհիւ այսպիսի կազմակերպութեան, եակոբինական ակումբն ուժ էր ներկայացնում և այս ակումբի կողմից ընդունուած որոշումներն երբեմն իսկական օրէնքի ուժ էին ունենում, նամանաւանդ, որ ժողովրդական շատ ներկայացուցիչներ միևնոյն ժամանակ և այդ ակումբի անդամներ էին։ Մեծ ժողովրդականութիւն ունէր այս ակումբում Ռոբեսպիերն, որը լաւ էր հասկանում, թէ որքան կարևոր էր ժողովրդական ներկայացուցչի համար հաստատուն յենարան ունենալ ժողովրդի մէջ։ Եակոբինական ակումբը պաշտպանում էր սահմանադիր ժողովին և այն դէպքերում, երբ նրա որոշումները տարբերւում էին ակումբի որոշումներից։ Մի քանիսն այդ պատճառով դժգոհ էին եակոբիններից, ուստի կազմեցին աւելի ծայ-

բայց ակումբներ, այսպէս կոչուած, կորդելեան ակումբ, ուր առանձին յաջողութիւն ունէին հրապարակախօս Մարատն և փաստաբան Դանտօն։

Երբ 1791 թուի յունիսի 21-ին Պարիզն իմացաւ թագաւորի փախստեան մասին, անմիջապէս ակումբները սկսեցին պահանջել Լիւդովիկոսի թագից հրաժարեցումն։ Կորդելեանները կոչ հրատարակեցին, ուր ի միջի այլոց, ասուած էր. «Ժողովրդի և թագաւորի մէջ այժմեանից կապը խզուած է։ Ազատ ֆրանսիացիները, կորդելեան ակումբի անդամներն իրանց յայտարարում են բրոնակալների սպանողներ»։ Միևնոյն ժամանակ կորդելեանները զիմեցին եակոբինեաններին խնդրելով միասին հանրագիր ներկայացնել ազգային ժողովին Լիւդովիկոսի ֆրանսիական գահից զրկելու մասին։ «Լիւդովիկոսը հրաժարուել է գահից, ասուած էր այդ հանրագրում, այժմեանից նա մեզ համար ոչինչ է... Մնում է իմանալ՝ ձեռնտու է Լիւդովիկոս XVI-ի տեղն ընտրել ուրիշ թագաւոր։ Մեր ընկերութիւնը չի կարող այլևս ծածկել, որ արքայական, մանաւանդ ժառանգական իշխանութիւնը, ազատութեան հետ միաբանել չի կարող։ Դուցէ հարկ չէր լինիլ նրա ոչնչացումն այսպէս շուտ պահանջելը, եթէ թագաւորը հաւատարիմ մնար երդման։ Մենք խնդրում ենք ձեզ, օրէնսդիրներ, կամ անմիջապէս յայտարարել, որ Ֆրանսիան այլևս միապետութիւն չէ, կամ գոնէ, նախքան երկրորդ անգամ այս գեղեցիկ երկիրը միապետական շղթաներով կաշկանդելը, սպասել մինչև բոլոր դեպարտամենտները այս լուրջ խնդրի

մասին կայտնեն իրանց կարծիքը»։

Այս հանրագիրն ուղարկելով Ազգային Ժողովին, ակումբների անդամներն երկրի ամեն կողմում սկսեցին անմիջապես քարոզել ազգային կոնվենտ գումարելու օգտին, որ պիտի վճռէր Ֆրանսիայի կառավարութեան բարեփոխութեան հարցը։ Կազմուեց նոր հանրագիր, որը 1791 թուի յուլիսի 17-ին պիտի ստորագրէր ամբողջ ժողովուրդը։ Այս հանրագրի մէջ ասուում էր, որ ստորագրողները միայն այն ժամանակ կընդունեն Լիւդովիկոս XVI-ին ֆրանսիական թագաւոր, երբ կկայանայ կոնվենտի ընտրութիւնը և վերջինս քուէ կտայ յօգուտ Լիւդովիկոսի։ Յուլիսի 17-ին, երբ ժողովուրդն սկսեց հաւաքուել Մարսեան դաշտում, ակումբների մշակած հանրագիրը ստորագրելու համար, յանկարծ յայտնի եղաւ Ազգային Ժողովի որոշումը թէ՝ թագաւորի անձն այնքան անձեռնմխելի է, որ չի կարելի զրկել թագից և որ պատժի ենթարկուելու են միայն թագաւորին «յափշտակողները» և ոչ նա ինքը։ Ակոբինները իբրև սահմանադիր ժողովի հաւատարիմ պաշտպաններ, հրաժարուեցին ստորագրելուց, մինչդեռ կորդելիանները պնդում էին և պահանջում, որ հանրագիրն ստորագրուի և ուղարկուի ազգային ժողովին։ Տեղի ունեցան թիւրիմացութիւններ, աղաղակ, վէճ և ամբողջ Մարսեան դաշտը ծածկուեց գոռացող և յուզուող ժողովրդով։ Դրանից օգտուեցին ակումբի և ժողովրդական շարժման թշնամիները և Մարսեան դաշտում ամբոխը խաղաղեցնելու համար դուրս եկաւ ազգային գվար-

դիայի հրամանատար Լաֆայեթը և քաղաքապետ Բայլին, ուղեկցութեամբ մեծ քանակութեամբ հեծելազօրքի։ Առանց նախազգուշացնելու Լաֆայեթը հրամայեց գնդակահարել ամբոխին։ Առաջացաւ սոսկալի սարսափ, խելագար փախուստ և յուլիս 17-ը վերջացաւ բաղմաթիւ զոհերով։

Միւս օրը քաղաքապետ Բայլին ներկայացաւ սահմանադիր ժողովին, որ նախորդ օրուայ արիւնահեղ դէպքը զեկուցանի և ի հարկէ մեղադրեց հասարակապետականներին, որոնց խղճի վրա պիտի ծանրանայ անմեղ մարդկանց արիւնը։ Ազգային ժողովը հաւատաց Բայլիին և ազգային ժողովի նախագահը ֆրանսիական ժողովրդի անունից շնորհակալութիւն յայտնեց Լաֆայեթին և Բայլիին, որ կարողացել են այդպէս ճարպիկ կերպով պահպանել հասարակական կարգը։ Բացի այդ, հէնց նոյն օրն ընդունուեց մի օրէնք, որով խիստ պիտի պատժուէին բանաւոր կամ գրաւոր փորձերը ժողովրդական յուզումն առաջ բերելու կամ օրէնքին չհնազանդուելու համար։ Ազգային ժողովը վճռականապէս գնում էր ճնշումների ճանապարհով և ակումբների մի քանի անդամները ստիպուած էին հեռանալ Ֆրանսիայի սահմաններից, դրանց թւում էին Մարատն ու Դանտօնը։ Սկսուեց, ինչպէս ասում է պատմարան Օլիարը, փոքրիկ բուրժուական տարաբերումն (տիրրօր)։

XI

Մինչ այդ, սահմանադիր ժողովի աշխատանքները վերջանալու վրա էին. սահմանադրու-

թիւնը մշակուած էր. կրկին վերաքննուած, և թագաւորն երկրորդ անգամ երդուեց հնազանդուել սահմանադրութեան բոլոր յօդուածներին։ 1791 թուի սեպտեմբերին սահմանադիր ժողովը որոշեց, որ կարելի է արդէն ցրուել և նրան պիտի փոխարինի օրէնսդրական ժողովը, որի պարտաւորութիւնն էր սահմանադիր ժողովի մշակած սկզբունքները մտցնել կեանքի մէջ։

Քիչ մանրամասն քննենք 1791 թուի սահմանադրութիւնը, որ սկիզբ դրեց այն պետական կազմի, որ ընդհանուր գծերով պահպանուել է Արևմտեան Եւրոպայում մինչև մեր օրերը։ Նա սահմանեց Ֆրանսիայում սահմանափակ միապետութիւն, այսինքն թագաւորի իշխանութիւնը սահմանափակւում էր օրէնսդրական ժողովով, ղեկավարուելով սահմանադրութեամբ։ Ֆրանսիայում օրէնքից բարձր հեղինակութիւն չկայ։ Թագաւորը կառավարում է օրէնքով և իրաւունք ունի պահանջել իրան հնազանդուել յանուն օրէնքի։ Թագաւորը գահ բարձրանալու ժամանակ օրէնսդրական ժողովի ներկայութեամբ երդուելու է ազգին, որ հաւատարիմ կլինի ինչպէս ազգին, նոյնպէս և օրէնքին։ Դէպի Լիւդովիկոսն անվստահութիւն տածելով 1789 թուի գործիչները սահմանադրութեան մէջ մտցրին յօդուածներ, ուր թուած էին այն դէպքերը, երբ թագաւորը գահից զրկուած է համարւում։ Յօդուած 5-ն ասում է. «Եթէ օրէնսդրական մարմնի հրաւիրելուց մի ամիս յետոյ թագաւորը չի երդուիլ կամ տուածը յետ կվերցնի, նա գահից հրաժարուած է համար-

ւում»։ 6 րդ յոդուածն ասում է. «Եթէ թագաւորը զօրքի գլուխ կանգնի և նրան ուղղի ազգի դէմ, կամ ազգային որոշմամբ չարգելի այնպիսի ձեռնարկութիւն, որ նրա անունովն է օգտւում, նա համարւում է դահաղուրկ»։ Վերջապէս 7-րդ յոդուածը. «Եթէ թագաւորը հեռանայ թագաւորութիւնից և չվերադառնայ օրէնսդրական մարմնի հրաւէրով նշանակեալ ժամանակին, որ 2 ամիսից քիչ չպիտի լինի, նա համարւում է դահաղուրկ»։

Թագաւորի ոճիրի չափն էլ ամբողջապէս պատկանում էր օրէնսդրական իշխանութեան։ Այսպէս՝ սահմանադրութեան 10-րդ յոդուածն ասում է. «Ազգը բաց է թողնում թագաւորի և նրա արժանապատուութեան պահպանութեան համար յայտնի դրամական գումար, որի չափը որոշում է օրէնսդրական ժողովը իւրաքանչիւր թագաւորի գահ բարձրանալու օրից մինչև նրա մահը»։

Արքայական իշխանութեան այս սահմանափակումներն այնուամենայնիւ թողեցին թագաւորի անձը սրբազան և անձեռմխելի։ Ազգային ժողովի առաջ կառավարական բոլոր գործողութիւնների համար պատասխանատու էր ոչ թէ թագաւորը, այլ նրա նախարարը, որը պարտաւոր էր ստորագրել բոլոր պաշտօնական թղթերը։ «Ոչ մի դէպքում թագաւորի բանաւոր և գրաւոր հրամանը չեն կարող պատասխանատուութիւնից ազատել նախարարին»։

Մեծ հետաքրքրութիւն էին ներկայացնում և սահմանադրական օրէնքները, որոնք վերաբե-

րում էին դատաստանական իշխանութեան։ «Դատաստանական իշխանութեան դերը—ասում է առաջին յօդուածը—ոչ մի դէպքում չի կարող կատարել ոչ թագաւորը և ոչ օրէնսդրական ժողովը»։ «Քաղաքացիները—ասում է մի ուրիշ յօդուած—կարող են դատուել միայն այն դատարանով, որ սահմանուած է օրէնքով. նոքա չեն ենթարկւում որ և է յատուկ դատարանի»։ «Բոլոր ձերբակալուածները—ասում է մի այլ յօդուած—պիտի խսկոյն հարցաքննութեան ենթարկուեն։ Ամենածայրայեղ դէպքում հարցաքննութիւնը պիտի կատարուի 24 ժամից ոչ ուշ։ Եթէ հարցուփորձից կերևայ, որ ձերբակալուածին մեղադրելու պատճառ չկայ, նրան անմիջապէս ազատ են թողնելու»։ 17-րդ յօդուածն ասում է. «Ոչ ոք չպէտք է ենթարկուի հալածանքի, կամ դատի տրուի այն բանի համար, որ նա գրել է, տպագրել է կամ տարածել է անկախ բովանդակութիւնից, եթէ միայն նա կանխամտածութեամբ չի գրգռում չհնազանդուել օրէնքին, անուանարկել սահմանադրական իշխանութիւններին, դիմադրել պետական գործողութիւններին, և այն գործողութիւններին, որ օրէնքով ճանաչուած են ոճիր կամ յանցանք»։

Բացի սահմանադրական օրէնքներից, 1791 թուի սահմանադրութեան մէջ էր մտել անհատի և քաղաքացու իրաւանց դեկլարացիան, որի բնագիրը մենք վերը բերեցինք, իբրև առաջաբան սահմանադրութեան, որ ասում էր. «Ազգային ժողովը կամենալով կառուցանել Ֆրանսիայի սահմանադրութեան շէնքը անհատի և քաղաքացու

իրաւանց հիմքի վրա, ընդմիշտ ոչնչացնում է այն հիմնարկութիւնները, որոնք բռնաբարում էին ազատութիւնն ու քաղաքացիների հաւասարութիւնը։ Այս օրից էլ չկան ոչ ականաւորներ, ոչ արտօնեալներ, որպիսի արտօնութիւնները տրւում էին ժառանգաբար. ոչ դասակարգային բաժանումն, ոչ ճորտութիւն, ոչ ժառանգական դատարան, ոչ տիտղոսներ. չկայ ոչ մի արտօնութիւն, ոչ մի ասպետական միաբանութիւն—չկայ ոչ մի այնպիսի բան, որ ենթադրում է թէ իբր մարդիկ ծննդեամբ իրար հաւասար չեն։ Այժմենից հասարակական պաշտօնները չեն կարող ձեռք բերուել ոչ փողով, ոչ ծագումով և ոչ ժառանգաբար։ Ոչ ոք չի կարող այնպիսի խոստումն կամ որ և է պարտաւորութիւն տալ, որոնք կհակասէին մարդուս բնական իրաւունքին կամ սահմանադրութեան որոշումներին»։

Թւում էր, թէ այսպիսի արդար սկզբունքների վրա հիմնուած սահմանադրութիւնն երկար կտևի և կապահովի Ֆրանսիայում ցանկալի խաղաղութիւնն ու հանգստութիւնը։ Բայց իրօք հակառակը դուրս եկաւ և մի տարուց յետոյ ոչ միայն 1791 թուի սահմանադրութիւնը պիտի փոխուէր, այլ և Ֆրանսիայի կառավարութեան ձևը փոխուեց—սահմանադրական միապետութիւնից Ֆրանսիան դարձաւ հասարակապետութիւն։ 1789 թուի մարդկանց կառուցուածքի խախուտ լինելու պատճառն այն էր, որ հին բեժիմի արտօնեալ դասակարգերը թագաւորի հետ միասին ամեն կերպ ձգտում էին

Ֆրանսիան տանել հին կանքին, այն կանքին, երբ երկրային բոլոր բարիքներից օգուտում էին միայն թագաւորը, հոգևորականութիւնն ու ազնուականութիւնը։ Իր իսկական ուժերով անկարող լինելով կռուել երիտասարդ Ֆրանսիայի դէմ, թագաւորը հնարքներ էր որոնում բանակցելու օտար պետութիւնների հետ, որոնք պիտի օգնէին նրան յեղափոխական, առաջաւոր Ֆրանսիայի հետ կռուելու համար և Լիւդովիկոս XVI-ի օտար պետութիւններին դիմելու հետևանքն այն եղաւ, որ մի կողմից Ֆրանսիայում կործանուեց միապետութիւնը, իսկ միւս կողմից՝ անհամար պատերազմները, որ ամբողջ Ֆրանսիական հողը արիւնով ներկեցին։ Բայց այդ արիւնը չի ընկնում նրանց վրա, որոնք նշանաւոր գործը—անհատի և քաղաքացու իրաւանց դեկլարացիան և 1791 թուի սահմանադրութիւնն ստեղծեցին, այլ նրանց, որոնք տեսնելով, որ խաղաղ ճանապարհով չկարողացան իրանց նպատակին հասնել, օգնութեան կանչեցին Ֆրանսիա Պրուսիայի և Աւստրիայի զինուած զօրքերին։

ԼԵՆԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՈՒՆԱՎԱՆՈՒՄ ԳՈՒՄԱՐԱՆ
ՊԱՀԵՍՏ ՍՈՒ
ՏՊԱԳՐՎԱԾ Է 1971-Ի

9(44)
L-71

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. Մանտեգացցա—Կեղծաւոր դար (սպառ.) 25 կ.
2. Շ. Սենհօրոս—Ժամանակակից Եւրոպայի քաղաքական պատմութիւնը Ա. գիրք Անգլիա պատկերազարդ . . 50 կ.
3. Լօվինսկիյ—Սահմանադիր ժողովը Ֆրանսիայում 1789 թ. . . . 10 կ.

ԳԻՆՆ Է 10 Կ.

Գումարով գնողներին և գրավաճառներին 25% զիջումն կլինի

Դիմել՝ Эчміадзинъ Типографическому Комитету.

[3 n.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0058675

A I/16772